

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

ՓԱՍՏԱՐԿՄԱՆ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԴՊՐՈՑԸ
(մեթոդաբանական և իմացաբանական վերլուծություն)

Թ.00.01 - «Տեսական փիլիսոփայություն, տրամաբանություն, գիտության փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2012

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍՆԵՐ՝

Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ի.Դ.ԶԱՍԼԱՎՍԿԻ

փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Է.Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ.Ա.ՄԻՐՁՈՅԱՆ

ԱՌԱՋՆԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ Երևանի պետական համալսարան:

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012 թ. դեկտեմբերի 27-ին ժամը 14:00-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՅ-ի փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան - 0010, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. նոյեմբերի 27-ին:

Փիլիսոփայության և հոգեբանության
064 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝

հոգեբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Կ.Ե.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ջետազոտվող թեմայի արդիականությունը. Փաստարկման հիմնախնդիրների հետազոտության արդիականությունը բացատրվում է մի շարք հանգամանքներով, ամենից առաջ՝ փաստարկման առարկայական տիրույթի լայնությամբ՝ մարդու և հասարակության կենսագործունեության գրեթե բոլոր բնագավառներում փաստարկման իրականացման անհրաժեշտությամբ և կարևորությամբ: Մարդկության պատմության ընթացքում ժամանակ առ ժամանակ առավել սրությամբ է դրվել հասարակական, քաղաքական, ռազմական, մշակութային, կրոնադավանաբանական, մասնագիտական, ազգային, արժեքային, իրավական, բարոյահոգեբանական, կենցաղային և նման բնույթի հարցերը առավել քաղաքակիրթ հաղորդակցման, երկխոսության, համոզման ու հիմնավորման եղանակով, «ոչ թե ուժի փաստարկմամբ, այլ՝ փաստարկման ուժով»¹ լուծելու անհրաժեշտությունն ու պահանջը: Մեր դարաշրջանը՝ քաղաքակրթության զարգացման ժամանակակից փուլով և դրան բնորոշ գլոբալացման առանձնահատկություններով, այդ տեսանկյունից ավելի է աչքի ընկնում:

Փաստարկման տեսության զարգացման կարևորությունը պայմանավորված է նաև արդի տեղեկատվական տեխնոլոգիաների անմախաղեպ զարգացման և հասարակական երկխոսության միջոցների փոխակերպումներով, որոնց պայմաններում ավանդաբար ուսումնասիրվող փաստարկման գործընթացներն անհրաժեշտ է ընկալել նորովի՝ ներառելով փաստարկման տարատեսակների նեղ և կոնկրետ սահմանումներն ու դրանց գործառնման առանձնահատկությունների վերիմաստավորումը: Փաստարկման տեսության արդի զարգացումները կապված են տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման արդյունքում առաջ եկող փաստարկման տեխնիկական նոր եղանակների և հնարների բացահայտման, ուսումնասիրության, կիրառման նոր հնարավորությունների մշակման հետ: Մյուս կողմից, փաստարկման առանձնահատուկ տարրերի զարգացման և գործառնման միջոցների ու հնարների հետագա մշակումը և հարմարեցումն արդի պահանջներին փաստարկման դպրոցների առջև ծառայած խնդիրներից են:

Փաստարկման տեսության զարգացման ժամանակակից փուլը տեղի է ունենում մի շարք այլ գիտությունների և գիտակարգերի, այդ թվում՝ փիլիսոփայության պատմության և տեսության, տրամաբանության, սոցիալական հոգեբանության, ինչպես նաև գործունեության այլ բնագավառներում փաստարկման կիրառական հմտությունների վերածնակերպմանն ու զարգացմանը զուգընթաց: Փաստարկման ժամանակակից դպրոցներն ազգային և միջազգային փիլիսոփայական դպրոցների համակարգում առաջին հերթին հենվում են ազգային փիլիսոփայական ավանդույթների, խոսքի արվեստի, առանձնահատուկ արժեհամակարգերի վրա: Բացի այդ, շատ կարևոր է փաստարկման ժամանակակից դպրոցներում փաստարկման տեսության և պրակտիկ հմտությունների զարգացման նպատակով համաշխարհային և ազգային փիլիսոփայական մտքի, ավանդույթների և ազգային արժեքների ներմուծումն ու կիրառումը, ինչը հնարավորություն է ընձեռում բացահայտելու ավանդական մոտե-

¹ Այս նշանաբանով էր հրատարակվում Փաստարկման միջազգային ինստիտուտի (երևան) *IIA News* ամսագիրը:

ցունների կիրառման նոր ձևեր և մշակելու փաստարկման վերաբերյալ նոր տեսակերի և կիրառական մոտեցումներ:

Փաստարկման տեսության վերաբերյալ միջազգային գիտաժողովները և հրապարակումները միջազգային մասնագիտական ամսագրերում² վկայում են, որ փաստարկման տեսաբանները ուշադրություն են դարձնում փաստարկման ուսմունքների պատմությանը³, քանի որ փաստարկման խնդիրների տեսական մշակումը չի կարող համակողմանի լինել առանց դիմելու դրանց պատմությանը, պատմական վերիմաստավորմանը, անցյալի ժառանգության մնայուն արժեքների օգտագործմանը նոր տեսության համակարգում: Նման տիպի հետազոտությունները կնպաստեն փաստարկման պատմության վերաբերյալ ընդհանրական մենագրական աշխատությունների հրապարակմանը: Չափազանց կարևոր է, որ այդ հետազոտություններն ընդգրկեն նաև հարուստ ավանդույթներ ունեցող հայ փիլիսոփայական մտքի այն շերտերն ու երանգները, որոնք առնչվում են փաստարկման խնդրակարգին: Հակառակ պարագայում կկրկնվի այն, ինչ տեղի ունի տրամաբանության պատմության հետ: Հայր Ի.Բոխենսկին իր «Ձևական տրամաբանության պատմություն» հիմնարկ հետազոտության մեջ միայն հարևանցիորեն է նկատում Միջնադարյան Հայաստանում տրամաբանական հետազոտությունների առկայությունը⁴: Մինչդեռ, նորագույն հայկական հետազոտությունները ցույց են տալիս, որ «Դավիթ Անհաղթի ուսմունքը տրամաբանության առարկայի, մտքի ձևերի մասին տրամաբանության հին շրջանի պատմության կարևոր էջերից է, և տրամաբանական ուսմունքների համաշխարհային պատմությունը նշանակալիորեն կտուժի, եթե հաշվի չառնվի այն ամենն, ինչ մեզ հասել է մտածողի տեսական ժառանգությունից»⁵:

Ինչպես որ Դավիթ Անհաղթի տրամաբանական ուսմունքը հայ տրամաբանության պատմության կարևորագույն փուլն է, նույն ձևով էլ նրա տեսական ժառանգության մեջ տեղ գտած փաստարկման հարցերի լուսաբանումը հայ փաստարկման ուսմունքների պատմության էական բաղկացուցիչ մասն է: Կարևոր է Գ.Բրուտյանի այն եզրահանգումը, թե «Տրամաբանությունը Դավիթ Անհաղթի աշխատություններում դրսևորվում է նաև որպես փաստարկման տեսություն»⁶: Եվ եթե փաստարկման վերաբերյալ Դավիթ Անհաղթի հայացքները հետազոտված են⁷, ապա նույնը չի կարելի ասել հայ փիլիսոփայության պատ-

² Տե՛ս, մասնավորապես, *Argumentation, Philosophy and Retic* հանդեսները:

³ Փաստարկման հարցերին նվիրված հենց առաջին նշանակալի գիտաժողովում (XIII միջազգային փիլիսոփայական համաժողովի շրջանակներում, Մեխիկո, 1963 թ.) չորս զեկուցումներից երեքը տեսական բնույթի էին, իսկ մեկը վերաբերում էր փաստարկման տեսությունների պատմությանը (Ժան Վաիլ. *Փիլիսոփայական փաստարկման պատմությունը*): Տե՛ս, J.Wahl, *Histoire de l'argumentation Philosophique*. In: *Symposium sobre la argumentation filosofica*, 1963, էջ 7-17:

⁴ Տե՛ս, I.Bochenski, *A History of Formal Logic*, University Notre Dame Press, 1961, էջ 11:

⁵ Գ.Բրուտյան, Ս.Արևշատյան և ուրիշներ (խմբագր.), *Դավիթ Անհաղթը՝ Հին Հայաստանի մեծ փիլիսոփան*, Երևան, 1983, էջ 191:

⁶ Գ.Բրուտյան, *Դավիթ Անհաղթի ուսմունքը տրամաբանության մասին*, Երևան, 1980, էջ 152:

⁷ Տե՛ս, Հ.Հ.Հովհաննիսյան, *Փաստարկման հասկացության կազմը Դավիթ Անհաղթի երկասիրություններում*, Երիտասարդ իմաստասերի ամբիոն, պրակ 1, Երևան, 1993, էջ 3-22: Նույնի՝ *Փաստարկման մեթոդներն ու հնարները Դավիթ Անհաղթի երկասիրություններում*, նույն տեղում, էջ 23-39: Նույնի՝ *Փաստարկման հարցերը Դավիթ Անհաղթի երկասիրություններում*, ատենախոսության սեղմագիր, Երևան, 1993: Նույնի՝

մութան մյուս կարկառուն փիլիսոփաների տեսական ժառանգության խնդրո առարկա հիմնախնդիրների տեսանկյունից դիտարկվածության մասին: Դավիթ Անհաղթի տրամաբանական ուսմունքին նվիրված իր հետազոտություններից մեկում ակադեմիկոս Բրուտյանը նշում է. «Տրամաբանության պրոբլեմների վերլուծման բարձր մասնագիտական մակարդակը, հարցադրումները և նրանց լուծումը խոսում են այն մասին, որ Դավիթ Անհաղթը ունեցել է իր տրամաբանախնդիրները, որ հայ իրականության մեջ մինչև Դավիթ Անհաղթը տրամաբանության գիտությունն արդեն ունեցել է իր ավանդույթները»⁸: Այս գնահատականը վերաբերում է նաև փաստարկման հարցերին: Ու թեպետ հայ մտածողներից ոչ մեկը փաստարկման տեսության վերաբերյալ չի թողել սերունդներին մի ամբողջական աշխատասիրություն, այլ կերպ ասած, նրանք փաստարկման տեսության հարցերն ի մեծի մասի քննել են օբյեկտ-լեզվի և ոչ թե՛ մետա-լեզվի մակարդակում (ինչը նկատվում է նաև այլ ժողովուրդների մշակույթի պատմությունը դիտարկելիս, և ինչը կարելի է բացատրել այն բանով, որ բանական մարդը փաստարկում էր շատ ավելի վաղուց, քան ինքը կարող էր գիտակցել, որ փաստարկում է և շատ ավելի առաջ, քան ստեղծել է փաստարկման տեսությունը որպես այդպիսին՝ «Homo Sapiens-ը Homo Philosophicus է, Homo Argumenticus»⁹), այնուամենայնիվ, փաստարկման հարցերի, փաստարկման տեսության պահանջների գործնական իրականացումը, զգալի տեղ է գրավել հայ իմաստասերների գործերում: Վերջիններիցս դիտարկվող հետազոտության մեջ որպես փաստարկման հայ ուսմունքների պատմության ակնառու դեմքեր ընտրվել են Եզնիկ Կողբացին (IV-V դդ.), Դավիթ Անհաղթը (V դար), և Գրիգոր Տաթևացին (XIV-XV դդ.), որոնց տեսական ժառանգության մեջ փաստարկման հարցերի քննությունն ու լուսաբանումը կարելի է գնահատել որպես հայ փաստարկման ուսմունքների պատմության կարևորագույն փուլեր: Ատենախոսությունում փաստարկման հարցերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք իրենց հարուստ ավանդույթներն ունեն հայ փիլիսոփայության պատմության մեջ և միևնույն ժամանակ վկայում է, որ Եզնիկ Կողբացին, Դավիթ Անհաղթը, Գրիգոր Տաթևացին հայ իրականության մեջ ունեցել են իրենց գաղափարական և՛ նախորդները, և՛ հաջորդները և, որ նրանց երկերում փաստարկման խնդիրների վերհանումը չի սպառում ու չի սահմանափակում հայ փաստարկման ուսմունքների պատմության ուսումնասիրությունը և, որ հայ փիլիսոփայության պատմության մյուս կարկառուն դեմքերի տեսական ժառանգությունը կարող է հետազոտության նյութ դառնալ փաստարկման տեսությամբ և պատմությամբ հետաքրքրվող այլ հետազոտողների համար:

Դեկավարվելով այն սկզբունքով, որ յուրաքանչյուր տեսության պատմությունը կարելի է ճիշտ ըմբռնել և ըստ արժանվույն գնահատել այդ տեսության զարգացման արդի մակարդակի տեսանկյունից, հետազոտությունում քննության նյութ դարձած հայ փիլիսոփաների փաստարկման մասին դիտարկումները վերլուծելիս փորձ է արվել ստեղծել փաստարկման ժամանակակից գիտության սեփական ըմբռնումների կաղապարը, որի համար հիմք են ծառա-

Փաստարկման հարցերը հայ փիլիսոփայական մտքի պատմության համատեքստում, Գիրք 1. *Երեք ուրվագիծ՝ Եզնիկ Կողբացի, Դավիթ Անհաղթ, Գրիգոր Տաթևացի*. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2005, 326 էջ:

⁸ Գ.Բրուտյան, *Դավիթ Անհաղթի ուսմունքը տրամաբանության մասին*, Երևան, 1980, էջ 150:

⁹ Նշում է Գ.Բրուտյանը իր դասախոսություններում:

յել հայրենական և արտասահմանյան տեսաբանների աշխատությունները: Փաստարկումը դիտարկվել է որպես որոշակի գիտական տեսության լեզու՝ իր համապատասխան իմաստաբանությամբ (փաստարկման հասկացութային կազմը) և շարահյուսությամբ (փաստարկման մեթոդներն ու հնարները):

Ատենախոսության չորրորդ և հիմնական գլխում իրականացվում է փաստարկման տեսության բազմաբնույթ պրոբլեմների քննությունը Փաստարկման երևանյան դպրոցի ներկայացուցիչների ստեղծագործությունների դիտանկյունից: Փաստարկման երևանյան դպրոցը կայացել ու կայունացել է: Այն տվել է իր ստեղծագործական արդյունքները, որոնք հավանություն են ստացել փաստարկման արտասահմանյան շատ հեղինակավոր մասնագետների կողմից:

Այսօր տարբեր երկրներում (ԱՄՆ, Բելգիա, Կանադա, Նիդեռլանդներ, Գերմանիա և այլուր) հրատարակվում են փաստարկման հարցերին նվիրված ամսագրեր ու ժողովածուներ, պարբերաբար կազմակերպվում են միջազգային և տեղական համաժողովներ ու գիտաժողովներ: Ստեղծվել են և շարունակվում են ձևավորվել փաստարկման հետազոտության գիտական դպրոցներ¹⁰ և գիտահետազոտական ինստիտուտներ: Հատկապես պետք է ընդգծել Փաստարկման երևանյան դպրոցի առկայությունը և դրա ճանաչումը փաստարկման տեսության մասնագետների միջազգային շրջանակներում: Ստեղծվել են նաև փաստարկման հարցերն ուսումնասիրող մի շարք միջազգային կազմակերպություններ, մասնավորապես՝ Փաստարկման միջազգային ընկերություն Ամստերդամում, Փաստարկման միջազգային ինստիտուտ Երևանում (1991 թ.), որը 2004 թ. տեղափոխվեց Ամստերդամ (Նիդեռլանդներ): 2006 թ. Երևանում, Ռուս-հայկական (սլավոնական) պետական համալսարանին կից ստեղծվեց Փիլիսոփայության, տրամաբանության, փաստարկման և հաղորդակցության միջազգային ինստիտուտ, որը հաջողությամբ իրականացրեց առաջին միջազգային գիտաժողովի (մայիսի 31-հունիսի 2, 2007 թ., Երևան) կազմակերպումը¹¹:

Փաստարկման երևանյան դպրոցի ավանդույթներով հարուստ գործունեությունը մշտապես շարունակվում է: Հետևելով արտասահմանյան մի շարք երկրների օրինակին, ինչպես նաև՝ սեփական պատմությանը, և, հաշվի առնելով մեր երկրում ձեռք բերված հաջողությունները խնդրո առարկա բնագավառում, Փաստարկման երևանյան դպրոցը, նոր գաղափարներ, նոր տեսական հարցեր առաջադրելու և հին, չլուծված հարցադրումները հաղթահարելու նպատակով, 2011 թ. ստեղծեց Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտ Երևանի հաշատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին կից:

Փաստարկման երևանյան դպրոցի և, մասնավորապես, դրա հիմնադիր և ղեկավար ակադեմիկոս Գ.Բրուտյանի փաստարկման տեսության ոլորտում բազմակողմանի ու հիմնարար գործունեությունը գնահատել են շատ նշանավոր գիտնականներ և հեղինակություններ: Այսպես՝

¹⁰ Մասնավորապես հարկ է առանձնացնել Պենսիլվանիայի (ԱՄՆ), Բրյուսելի, Գեմտի (Բելգիա), Ամստերդամի (Նիդեռլանդներ), Տուրկուի (Ֆինլանդիա), Լայբցիգի, Համբուրգի, Սարբրուկենի, Տյուբինգենի (Գերմանիա) համալսարանները և այլն:

¹¹ Ինստիտուտը կարճատև գործունեություն ծավալեց և մեկ տարի անց դադարեցրեց իր աշխատանքը՝ պայմանավորված մի շարք ֆինանսական խնդիրներով:

- «Գոհունակությամբ պետք է նշել, որ Փաստարկման երևանյան դպրոցը միջազգային լայն ճանաչում է ստացել»¹²,
- «Գ.Բրուտյանը ստեղծել է փաստարկման ընդհանրացնող տեսություն, մշակել է փաստարկող դիսկուրսի կադապարը, բացահայտել է փիլիսոփայական փաստարկման առանձնահատկությունը: ԽՍՀՄ-ում փաստարկման բնագավառում հետազոտությունների զարգացումը նախ և առաջ կապված է Բրուտյանի անվան հետ: Անկախ պետությունների համագործակցության մի շարք երկրներում, ինչպես նաև որոշ արտասահմանյան երկրներում Բրուտյանի աշակերտները և հետևողները ձեռնամուխ եղան փաստարկման հայեցակարգի հետազոտմանը՝ հիմք ունենալով իր գաղափարները: Կազմավորվեց Փաստարկման երևանյան դպրոցը, որի արդյունավետ գործունեությունը ճանաչվել է փաստարկման հետազոտության համաշխարհային կենտրոնների կողմից»¹³:
- «Գ.Բրուտյանը կազմակերպել է բազմաթիվ միջազգային գիտաժողովներ՝ նվիրված հայագիտության, փաստարկման տեսության և գիտության այլ բնագավառներին՝ ինչպես Յայաստանում, այնպես էլ արտերկրներում: Գ.Բրուտյանը երկար տարիներ հովանավորել է փաստարկման վերաբերյալ հետազոտությունները՝ Խորհրդային Միությունում և նրա սահմաններից դուրս»¹⁴:
- «...Լինելով Յայաստանում փաստարկման տեսության դպրոցի հիմնադիր, Դուք Ձեր անունը գրեցիք փիլիսոփայության պատմության մատյանում, նոր մակարդակի բարձրացնելով հայ փիլիսոփայական միտքը»¹⁵:
- «Փաստարկման տարբեր դպրոցների տարբեր մոտեցումները փաստարկման տեսության նկատմամբ թշնամական մոտեցումներ չեն և չեն բացառում միմյանց: Փաստարկման տեսության նկատմամբ ակադեմիկոս Գ.Բրուտյանի մոտեցումը սինթետիկ է, համադրական, որտեղ հաշվեկշռված ձևով քննարկվում են բոլոր տեսանկյունները, այլ կերպ ասած, ներառում է դրանք»¹⁶:

Փաստարկման երևանյան դպրոցի գործունեությունը գնահատելու տեսանկյունից հիշատակման է արժանի 1988 թ. Մոսկվայում հրատարակված *Իմացության տեսություն, տրանսբանություն* խորագրով զեկուցումների թեզերի ժողովածուն, որը նախապատրաստում էր Բրայտոնում (Մեծ Բրիտանիա) 1988 թ. կայացած տասներորդ համաշխարհային փիլիսոփայական համաժողովը *Մարդու փիլիսոփայական ըմբռնումը* թեմայով: Ժողովածուն հրատարակել էր ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության ինստիտուտը: Ուշագրավ է, որ այդ ժողովածուն միակն է փիլիսոփայության համաշխարհային համաժողովին ներկայացված ժողովածուներից, որ ունի առաջաբան, որտեղ համաշխարհային համաժողովի կազմակերպիչները Մոսկվայից, Երևանից, Մինսկից, Օդեսայից, ներկայացված զեկուցումները դիտում են

¹² Վիկտոր Զամբարձունյան, *Խորհրդային Յայաստան*, 21.02.1990:

¹³ П.В.Алексеев, *Философы России XIX-XX столетий*. М.: Академпроект, 2002, 1152 с., сс. 125-126; տես նաև՝ А.П.Алексеев, *Аргументация, познание, общение*, М; 1991, էջ 4; *Who's Who in the World*, 18th, Ed., էջ 301:

¹⁴ *Informal Logic*, Vol. XI, N 1, էջ 60:

¹⁵ Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ռեկտոր պրոֆեսոր Ս.Ձուլյանի ուղերձից:

¹⁶ А.П.Алексеев, *Аргументация, познание, общение*, М, 1991.

որպես ակադեմիկոս Բրուսյանի հետևորդների զեկուցումներ, իսկ նրանց հեղինակներին՝ որպես Փաստարկման միասնական երևանյան դպրոցի ներկայացուցիչներ: Ի դեպ, այդ համաժողովի շրջանակներում կար փաստարկման հարցերին նվիրված Կլոր սեղան, որը ևս ղեկավարում էր Փաստարկման երևանյան դպրոցի ղեկավարը. «Իմացության տեսություն, տրամաբանություն ժողովածուն ներառում է զեկուցումների մի մեծ խումբ՝ նվիրված փաստարկման ձևական-տրամաբանական տեսության փիլիսոփայական խնդիրներին: Այդ տեսությունը վերջին տարիներին հաջողությամբ մշակվում է հորհրդային Միությունում, նախևառաջ՝ Գ.Ա.Բրուսյանի և նրա աշակերտների աշխատություններում: Առաջիկա XVIII համաշխարհային փիլիսոփայական համաժողովում փաստարկման տեսության խնդրակարգը կքննարկվի հատկապես»¹⁷: Այսպիսի ուժգնությամբ և ծավալով փաստարկման տեսության հարցերի հետազոտության պայմաններում կարևոր ու հրատապ է Փաստարկման երևանյան դպրոցի ոչ միայն սոսկ առկայության ամրագրումը, այլ՝ դրա գործունեության վերահանումն ու բազմակողմանի վերլուծությունը՝ փիլիսոփայության տեսության և տրամաբանության, փաստարկման տեսության համակարգում, ինչպես նաև՝ հայ փիլիսոփայական մտքի պատմության, հայ փաստարկման ուսմունքների պատմության համատեքստում:

Չետագոտության նպատակը և խնդիրները: Չետագոտության նպատակն է ուսումնասիրել, համադրել և ամբողջացնել Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում մշակված փաստարկման տեսության հիմնադրույթները, առանձին ուղղություններով իրականացված ուսումնասիրությունները և եզրահանգումները, ներառյալ Փաստարկման երևանյան դպրոցի հիմքերից մեկը հանդիսացած հայ միջնադարյան փիլիսոփաների աշխատություններում ներկայացվող փաստարկման տեսության տարրերը, ինչպես նաև՝ Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների ամբողջությունը:

Չետագոտության նպատակից բխող խնդիրներն են.

- Բացահայտել և ներկայացնել փաստարկման տեսության տարրերը միջնադարյան հայ մտածողների՝ Եզնիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի և Գրիգոր Տաթևացու աշխատություններում, քննարկել այդ տարրերի կարևորությունն ու արժեքը Փաստարկման երևանյան դպրոցի առաջացման և զարգացման տեսանկյունից:
- Ուսումնասիրել Փաստարկման երևանյան դպրոցի առաջացման տեսական հիմքերը, ներկայացնել Դպրոցի ինստիտուցիոնալացման գործընթացը՝ ներառյալ դրա գործունեության շրջանակներում իրականացված գիտաժողովները, գիտական սեմինարները, դասախոսությունները Չայաստանում և արտերկրում:
- Ներկայացնել Փաստարկման երևանյան դպրոցի տեսական մշակումները՝ Դպրոցի տեսական մոտեցումներն ու գործունեության ուղղություններն արտացոլող գիտական հրատարակումներում:
- Իրականացնել փաստարկման բազմաբնույթ հիմնահարցերի մեկնաբանությունը Փաստարկման երևանյան դպրոցի ներկայացուցիչների ստեղծագործությունների տեսանկյունից: Զննական վերլուծության են-

¹⁷ *Теория познания, логика*. Препринты докладов советских ученых к XVIII Всемирному философскому конгрессу, Москва, 1988, (с. 8-14).

թարկել փաստարկման այն հիմնախնդիրները, որոնք առաջադրել և լուծում են փաստարկման ժամանակակից հայ տեսաբանները:

- Ներկայացնել Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում մշակված՝ փաստարկման տեսության առանձնահատկություններն ու տարբերությունները աշխարհում գործող փաստարկման այլ դպրոցների և մշակված այլ հայեցակարգերի համեմատ:
- Ուսումնասիրել Փաստարկման երևանյան դպրոցի տեսական ժառանգությունը՝ վերլուծության ենթարկելով և համակարգելով տեսական մոտեցումներն ու հայացքները տրամաբանության համակարգում փաստարկման առանձնահատկությունների վերաբերյալ, փաստարկման առարկայական տիրույթի, փաստարկման ընթացքում ճշմարտության, փաստարկման և հիմնավորման, փաստարկման և լեզվի, փաստարկման և հռետորության, փաստարկման և մետափաստարկման վերաբերյալ:
- Ներկայացնել Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում փաստարկման տեսական հարցերի մշակման հետագա ուղենիշերը:

Թեմայի մշակվածության աստիճանը: Ատենախոսության մեջ, Փաստարկման երևանյան դպրոցի տեսական ժառանգության ուսումնասիրության նպատակով, ուսումնասիրվել են ինչպես հայաստանյան, այնպես էլ արտասահմանյան տեսաբանների աշխատությունները փաստարկման տեսամեթոդական հարցերի, ինչպես նաև փաստարկման հայեցակարգերի վերաբերյալ, որոնց վերլուծության միջոցով փորձ է արվել համակարգելու և ամբողջացնելու Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում մշակված փաստարկման տեսությունը, ինչպես նաև ցույց տալ այդ տեսության առանձնահատկություններն ու տարբերությունները՝ փաստարկման այլ դպրոցների և հայեցակարգերի հետ համեմատության դիրքերից: Այդ ուսումնասիրության համար կարևոր տեսական ինքն են հանդիսացել է.Աթայանհի, Ա.Աթանեսյանհի, Ա.Ամիրխանյանհի, Վ.Ասմունսի, Վ.Ավագյանհի, Ս.Արևշատյանհի, Ա.Բրուտյանհի, Գ.Բրուտյանհի, Ա.Գևորգյանհի, Բ.Գրուտենդորստի, Է.Դանիելյանհի, Ի.Ջալալսլու, Յ.Մադոյանհի, Է.Մարգարյանհի, Ս.Մելքոնյանհի, Դ.Մոսիսյանհի, Ռ.Ջիջյանհի, Յ.Սերգոյանհի, Ս.Սլաստյոնովի, Յր.Շաքարյանհի, Ֆ. վան Էնմերեն, Ջ.Ֆրիմանհի, Յա.Յիմտիկայի, Ռ.Ջոնսոնհի, Չ.Պերելմանհի, Չ.Պիետարինենհի, Ա.Յովհաննիսյանհի, Վ.Ստյոպինի, Լ.Յասկելվիչի և փաստարկման տեսությանն անդրադարձած մի շարք այլ հեղինակների աշխատությունները¹⁸:

¹⁸ Աթայան, Էդ. (1998): *Փաստարկման լեզուն*: Երևան. ԶԳ ԳԱԱ Գիտություն հրատարակչություն: Աթանեսյան, Ա. (2003): *Քաղաքական հիմնավորման առանձնահատկությունները*: Երևան. ԶԳ ԳԱԱ Գիտություն հրատարակչություն: Աթանեսյան, Ա. (2004): *Հաղորդակցությունները և կոնֆլիկտը*: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար: Երևանի համալսարանի հրատարակչություն: Աթանեսյան, Ա.Վ. (2006): *Հիմնավորման պրակտիկան և տեսությունը*: *Ինչպե՞ս են են տեսնում XXI դարի փիլիսոփայությունը*: Պրակ 5 (էջ 59-66): Երևան: Ամիրխանյան, Ա. (1995): *Հարցի էությունը և տիպերը*: Երևան. ԶԳ ԳԱԱ Գիտություն հրատարակչություն: Ամիրխանյան, Ա. (1999): *Փոխակերպական տրամաբանությունը և տրամաբանական գիտությունների տարբեր համակարգերը*: Փ.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր: Երևան: Ավագյան, Ս. (1999 ա): *Փաստարկման ոճը և լեզուն*: Երևան. ԶԳ ԳԱԱ Գիտություն հրատարակչություն: Բրուտյան, Ա., Բրուտյան, Գ. (2003): *Քաղաքական փաստարկման 101 կանոն*: Երևան. Նաիրի հրատարակչություն: Բրուտյան, Գ. (1997): *Փաստարկման էությունը և քաղաքադատարբերը*: Երևան. ԶԳ ԳԱԱ Գիտություն, Մխիթար Գոշ հրատարակչություն: Բրուտյան, Լ. (1991): *Փաստարկման լեզվում իմպլիկացիայի ներակայման հարցի շուրջ*: Մանկա-

վարժ, № 6 (էջ 67-70): Երևան; Գրիգորյան, Գ. (2003): *Աֆորիզմների էությունը և տիպերը (ինացաբանական և մեթոդաբանական վերլուծություն)*: Երևան. ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատարակչություն: Տե՛ս մասնավորապես, Ասված և փաստարկուն (էջ 22-23), *Ասվածը որպես փաստարկման շարահյուսական տարր* (էջ 23-25) բաժինները; Գևորգյան, Ա. (2003): *Հանդգնան գործընթացի յուրակերպությունը փաստարկման տեսության շրջանակներում*: Գիտական նստաշրջանի զեկուցումներ: Պրակ 1 (էջ 36-44): Երևան. ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատարակչություն; Գևորգյան, Ա. (2004): *Փաստարկման հոգեբանական գործոնները միջնադարյան հռետորական համակարգերում*: Գիտական նստաշրջանի զեկուցումներ: Պրակ 2 (էջ 45-55): Երևան. ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատարակչություն; Էսենթեն, վան Ֆ., Գրուտենդորստ, Ռ., Հենկենաս, Ֆ.Ս. (2004): *Փաստարկում. Վերլուծություն, Արժևորում, Ներկայացում*: Անգլերենից թարգմանել է Լ.Զիլֆուդարյանը Երևան: Նաիրի հրատարակչություն; Հովհաննիսյան, Հ.Հ. (1993 ա): *Փաստարկման հարցերը Դավիթ Անհաղթի երկասիրություններում*: Փ.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր: Երևան; Հովհաննիսյան, Հ.Օ. (1996 գ): *Վեճը որպես մտավոր հաղորդակցման եղանակ. փիլիսոփայական վերլուծություն*: Փ.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր: Երևան; Հովհաննիսյան, Հ.Օ. (2003) *Հասարակական համակարգի զարգացման հիմնախնդիրները*: Երևան. *Նորավանք* գիտակրթական հիմնադրամ: Հովհաննիսյան, Հ.Օ., Հովհաննիսյան, Գ. (2006): *Բանավեճի մեթոդը ուսումնադաստիարակչական գործընթացում*: Երևան. ՀՀ ԳԱԱ Գիտելիք հրատարակչություն; Հովհաննիսյան Ա. (1997): *Փաստարկման արտատարման քանակական տարրերը*: Երևան. ՀՀ ԳԱԱ Գիտություն, *Մխիթար Գոշ* հրատարակչություն; Մարոյան, Հ. (2006): *Ոչ ձևական տրամաբանության բնույթն ու բաղկացուցիչները*: Երևան. ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատարակչություն; Մելքոնյան, Ս. (1985): *Փաստարկման պատմությունը և տեսությունը մի գրքով: Սովետական մանկավարժ*, № 10 (էջ 78-80) Երևան; Մոսիսյան, Դ. (2008). *Փիլիսոփայական փաստարկումը բազմակարծության համատեքստում*: Երևան. *Փիլիսոփայության միջազգային ակադեմիա* հրատարակչություն; Շաքարյան, Հր. (1997): *Փաստարկման էթիկական-արժեքային տեսանկյունները*: Երևան; Atanesyan, A. (2005). *Theory and Practice of Justification*. In: *News and Views*, № 9 December (pp. 45-51). Yerevan (Armenia) - Athens (Greece) - Berkeley (USA); Ayer, A. (1940). *The Foundations of Empirical Knowledge*. London; Balfour, A. J. (1848-1930). *Foundations of Belief*. London, 1895; Brutian, G.A. (1979). *On Philosophical Argumentation. Philosophy and Rhetoric*, 2 (pp. 77-90); Brutian, G.A. (1987). *Allgemeine Argumentationstheorie. Wissenschaft-liche Zeitschrift der Ernst-Moritz-rndt-Universität Greifswald. Fragen der Sprachphilosophie und Kommunikationsforschung Geselischafswissenschaftliche. Reine 1-2* (pp.29-32); Brutian, G.A. (1988 a). *Argumentation in der Tätigkeit des Menschen*. In: *Das Problem Mensch in der Philosophie* (pp.193-198), Moscau: *Gesellschaftswissenschaften und Gegenwart*; Brutian, G.A. (1989). *Logic and Argumentation*. In: *Informal Logic*. Canada: University of Windsor XI, 1 (p. 47); Brutian, G. (1991a). *The Architectonics of Argumentation*. In: Eemeren F. van & R.Grootendorst, A.Blair, Ch.Willard (eds.). *Proceedings of the Second International Conference on Argumentation. International Society for the Study of Argumentation* (pp. 61-63). Amsterdam: SICSAT; Brutian, G.A. (1991b). *The Language of Argumentation*. In: Eemeren F.H.van & R.Grootendorst, A. Blair, Ch.A.Willard (eds.). *Proceedings of the Second International Conference on Argumentation. International Society for the Study of Argumentation* (pp. 546-550). Amsterdam: SICSAT; Brutian, G. (1992). *The Theory of Argumentation, its Main Problems and Investigative Perspectives*. In: J.Pietarinen (ed.). *Problems of Philosophical Argumentation. I General Problems* (pp. 5-17). University of Turku, Turum Yliopisto; Brutian, G.A. (1993). *Logic of Argumentation (The Perelman's View: Pros and Cons Arguments)*. *Chaim Perelman et la Pensée contemporain*. Textes rassemblés par Guy Haarscher (pp. 293-305), Bruxelles; Djidjian, R.Z. (1992). *Transformational Analysis and Inner Argumentation*. In: Pietarinen, J. (ed.). *Problems of Philosophical Argumentation. II Special Problems* (pp. 80-93). Finland: University of Turku; Eemeren, F.H.van, Grootendorst, R. (1984). *Speech Acts in Argumentative Discussions*. Dordrecht-Holland: *Foris* Publication; Freeman, J. (1991). *Dialectics and the Macrostructure of Arguments*. Berlin: *Foris* Publications; Grigorian, H. (1991). *Transcendental Arguments, Scepticism and the Problems of Other Mind*. In: Eemeren, F.H.van, Grootendorst, R.

(eds), *Proceedings of the Second International Conference on Argumentation* (pp. 157-160). Amsterdam: SICSAT; Hintikka, J. (1989). *The Role of Logic in Argumentation*. The Monist. 72,1 (pp. 8-9); Pietarinen, J. (ed.). (1992 a). Problems of Philosophical Argumentation. I General Problems. Finland: University of Turku; Pietarinen, J. (ed.). (1992 b). *Problems of Philosophical Argumentation*. II General Problems. Finland: University of Turku; Shakarian, H. (1991). *The Problems of the Axiological-Epistemological Subject in Argumentation*. In: Eemeren, F.H. van, R.Grootendorst... (eds), *Proceedings of the Second International Conference on Argumentation* (pp. 92-98). Amsterdam: SICSAT; Yaskevich, Ya. (1995). *Logical and Pragmatic Parameters of Argumentation*. In: F.H. van Eemeren, R. Grootendorst, J.A.Blair and Charles A.Willard (eds.) *Analysis and Evaluation. Proceedings of the Third ISSA Conference on Argumentation* (University of Amsterdam, June 21-24, 1994). Volume Sic Sat № 5 (pp. 473-475). International Centre for the Study of Argumentation. Amsterdam – The Netherlands; Агаян, П. (1984 а). *Критика перельмановской концепции аргументации*. В. сб. Даниелян, М. (ред.), *Философские проблемы аргументации*. Тезисы докладов (с. 196-198). Ереван: Изд-во АН Арм. ССР; Александрова, Д. (2006). *Ереванската школа по теория на аргументацията* (на българском языке). В кн.: *Метаморфози на реториката през XX век* (с. 175-208). София: *Университетско издателство Св. Климент охридски*, Алексеев, А. (1991). *Аргументация, познание, общение*. Москва: Изд-во *Московского университета*; Амирханян, А. (1998). *Экспликация понятия обоснование*. Ереван: Изд-во *Гитутуиун НАН РА*; Асмус, В. (1954). *Учение логики о доказательстве и опровержении*. Москва; Атанесян, А. (2000 а). *Гегелевская концепция обоснования*. Ереван: Изд-во *Гитутуиун НАН РА*; Атаян, Э. (1984 а). *К проблеме типологии аргументации*. В сб. Даниелян, М. (ред), *Философские проблемы аргументации*. Тезисы докладов (с. 30-31). Ереван: Изд-во АН Арм. ССР; Атаян, Э. (1984 б). *Уровни предикциирования и некоторые аспекты взаимоотношения предикации и аргументации*. В сб. Мхитарян, Г. (ред.), *Вопросы философии*. Выпуск 4 (с. 109-126). Ереван: Изд-во Ереванского университета; Барсегян, А. (2003). *Роль философской аргументации в становлении понятия физической реальности*. Доклады научной сессии. Выпуск 2 (с. 29-35). Ереван: Изд-во *Гитутуиун НАН РА*; Брутян, Г. (1981а). *Аргументация и нейните философски измерения* (на българском языке). *Политическа просвета*, 6 юни год XVI (с.46-54); Брутян, Г. (1984а). *Аргументация*. Ереван: Изд-во АН Арм. ССР; Брутян, Г. (1984б). *Философская аргументация. Современная эпоха и материализм* (на японском языке) 2 (с. 101-112). Токио; Брутян, Г. (1991). *Актуальные проблемы теории аргументации. Философские науки* 5 (с. 17-29; Брутян, Г. (1992). *Очерк теории аргументации*. Ереван: Изд-во АН Армении; Джиджян, Р. (1984 б). *Доказательство, обоснование, убеждение, аргументация*. В сб. Мхитарян, Г. (ред.). *Вопросы философии*. Выпуск 4 (с. 95-109). Ереван: Изд-во Ереванского университета; Еемерен, Х. ван, Марков, В., Чахоян, Л. (ред.). *Речевое общение и аргументация* (1993). Выпуск 1. Санкт-Петербург: Изд-во *Экономика и культура*; Заславский, И. (1984). *Некоторые особенности аргументации в математике*. В кн. Даниелян, М. (ред.). *Философские проблемы аргументации. Тезисы докладов* (с. 93-95). Ереван: Изд-во АН Арм. ССР; Ивин, А. (1970). *Основания логики оценок*. Москва: Изд-во *Московского Университета*; Оганесян, А.О. (2001 г). *Ереванската школа по аргументация* (на българском языке). В кн.: Саркис Саркисян. *Армения. Духовен и научен живот през вековете* (с. 374-386). София; Оганесян, С. (1993). *О становлении понятий теории аргументации*. Вестник Ереванского университета. 2(80) (с. 90-96); Оганесян, С. (1994). *О роли научного знания в философской аргументации*. Вестник Ереванского университета. 1(82) (с. 136-143); Слостенов, М. (1989). *Логические и внелогические аспекты аргументации* (Автореферат диссертации на степень кандидата философских наук). Ереван: Изд-во ЕГУ; Яскевич, Я. (1992 а). *Аргументация в науке*. Минск: Изд-во *Университетское*; Яскевич, Я. (1992 б). *Структура и динамика аргументации в науке*. Минск: Изд-во БГУ.

Փաստարկման երևանյան դպրոցի գործունեության վերաբերյալ համալիր գիտական ուսումնասիրություններն առաջին անգամ հրատարակվել են ատենախոսի մենագրություններում և գիտական հոդվածներում¹⁹: Մասնավորապես, փաստարկման տեսության տարրերի ուսումնասիրությանը եզնիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի և Գրիգոր Տաթևացու աշխատություններում նվիրված են ատենախոսի վեց հոդվածներ (դրանցից մեկը 2000 թ. Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում կազմակերպված *Հասարակական գիտությունները XXI դարի շեմին* միջբուհական գիտաժողովում կարդացված *Փաստարկման հարցերը Եզնիկ Կողբացու «Եղծ Աղանդոց» աշխատությունում* թեմայով զեկուցման տեքստն է) և մեկ մենագրություն²⁰: Մենագրության վերաբերյալ գրախոսական հոդված է գրել պատմ.գ.դ., պրոֆ. Է.Դանիելյանը²¹:

Փաստարկման երևանյան դպրոցի վերաբերյալ առկա են ատենախոսության հեղինակի մեկ մենագրություն, երկու գրքույկ և ավելի քան քսան հրատարակված հոդվածներ²²:

¹⁹ Զ.Զ.Յովհաննիսյան, *Փաստարկման հասկացության կազմը Դավիթ Անհաղթի երկասիրություններում: Երիտասարդ իմաստասերի ամբիոն*, պրակ 1, Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ. 1993, էջ 3-22: Նույնի՝ *Փաստարկման մեթոդներն ու հնարները Դավիթ Անհաղթի երկասիրություններում: Երիտասարդ իմաստասերի ամբիոն*, պրակ 1, Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., էջ 23-40: *Փաստարկման հարցերը Եզնիկ Կողբացու «Եղծ Աղանդոց» աշխատությունում: Հասարակական գիտությունները 21-րդ դարի շեմին*, Թեգիսներ, ԵրՊՕԼԻ, 2000: *Փաստարկման շարահյուսական մեթոդներն ու հնարները Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցում», Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու*, Երևան, 2001, հ.4, էջ 149-154: *Հարց ու պատասխանի տրամաբանության դրսևորումները Եզնիկ Կողբացու Եղծ աղանդոց աշխատասիրությունում, Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու*, Երևան, 2001, հ.2, էջ 103-112: *Գրիգոր Տաթևացին և փաստարկման տեսության հարցերը, Գիտական աշխատություններ, Հասարակական գիտություններ*, Պրակ երրորդ, Երևան, 2005, էջ 47-88:

²⁰ Զ.Զ.Յովհաննիսյան, *Փաստարկման հարցերը հայ փիլիսոփայական մտքի պատմության համատեքստում*: Գիրք 1. *Երեք ուրվագիծ՝ Եզնիկ Կողբացի, Դավիթ Անհաղթ, Գրիգոր Տաթևացի*: Երևան., ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., 2005, 326 էջ: Մենագրությունն արժանացել է առաջին կարգի մրցանակի՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթատուգատեսում):

²¹ Է.Դանիելյան, *Յովհաննիսյան Զ.Զ., Փաստարկման հիմնահարցերը հայ փիլիսոփայական մտքի պատմության համատեքստում, Լրաբեր հասարակական գիտություններ-րի*, Երևան., 2006, No 1, էջ 238-239:

²² Յովհաննիսյան, Զ.Զ., նույնի՝ *Համառոտ ակնարկ Փաստարկման երևանյան դպրոցի ծնավորման ու զարգացման մասին* (64 էջ), Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն, Մխիթար Գոշ հրատ., 1997: նույնի՝ *Հիմնավորման պրոբլեմը Փաստարկման երևանյան դպրոցում: Գիտական աշխատություններ, Հասարակական գիտություններ*, Պրակ 5 (էջ 4-39), Երևան. *Լինգվա հրատարակչություն*, 2007: նույնի՝ *Փաստարկման հարցերը հայ փիլիսոփայական մտքի պատմության համատեքստում*: Գիրք 2. Փաստարկման երևանյան դպրոց (452 էջ), Երևան, *Փիլիսոփայության միջազգային ակադեմիա* հրատ., 2009: նույնի՝ *Специфика и основные исследовательские направления Ереванской школы аргументации. Вопросы правоведения. Межвузовский сборник научных трудов*. № 2 (с. 59-71). Ереван: Изд-во ЕГУ, 2001; նույնի՝ *Основные аспекты деятельности Ереванской школы аргументации. Вопросы правоведения. Межвузовский сборник научных трудов*. № 3 (с. 33-39), Ереван: Изд-во ЕГУ, 2001; նույնի՝ *Ереванская школа аргументации* (с. 67), София, 2001; նույնի՝ *Ереванската школа по аргументация* (на болгарском языке). В кн.: Саркис

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները և մեթոդիկան: Հետազոտության իրականացման ընթացքում հեղինակն առաջնորդվել է մի շարք մեթոդաբանական մոտեցումներով և սկզբունքներով, այդ թվում՝ դիալեկտիկական մոտեցմամբ, պատմականության սկզբունքով, համեմատական մոտեցմամբ, համակարգային մոտեցմամբ, կիրառվել են ընդհանուր-գիտական և հատուկ-գիտական մեթոդներ՝ դեդուկցիայի և ինդուկցիայի, համանմանության, վերլուծության և համադրման, ինչպես նաև՝ փաստաթղթերի բովանդակային (կոնտենտ-վերլուծության) և դիսկուրս-վերլուծության մեթոդները: Փաստաթղթերի բովանդակային վերլուծության են ենթարկվել հայ միջնադարյան մտածողների աշխատությունները՝ փաստարկման տարրերի բացահայտման և վերլուծության նպատակով, ինչպես նաև Փաստարկման երևանյան դպրոցի գործունեության հետ կապված գիտական և կազմակերպական փաստաթղթերի ամբողջությունը: Դիսկուրս-վերլուծության են ենթարկվել Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում, ինչպես նաև այդ դպրոցի և փաստարկման ուսումնասիրություններին վերաբերող միջազգային այլ դպրոցների միջև տեղի ունեցող գիտական վիճաբանության գործընթացը, որի արդյունքում հնարավոր եղավ բյուրեղացնել և հակադրության ու համադրության մեջ բացահայտել Փաստարկման երևանյան դպրոցում առաջադրված տեսության առանձնահատկությունները:

Գիտական նորույթը: Աշխատանքի գիտական նորույթի կարգավիճակին են հավակնում ատենախոսության հետևյալ արդյունքները.

- հայ միջնադարյան մտածողներ Եզնիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Տաթևացու ուսմունքներում փաստարկման տեսության տարրերի, մասնավորապես՝ փաստարկման գործընթացում կիրառվող տրամաբանական մեթոդների ու հնարների, բարոյագիտական սկզբունքների ու չափանիշների, համոզման եղանակների ու հռետորական միջոցների, հարցադրման ձևերի, փաստարկման լեզվի շարահյուսության և հարակից այլ հարցերի բացահայտումն ու վերլուծությունը:
- Փաստարկման երևանյան դպրոցի արդի տեսամեթոդաբանական հիմքերի համալիր վերլուծությունն ու ամբողջական ներկայացումը,
- Փաստարկման երևանյան դպրոցի գործունեության ընթացքում մշակված տեսամեթոդաբանական գաղափարների վերլուծությունն ու ներկայացումը դիսկուրսիվ՝ փաստարկողական մոտեցմամբ, ինչի օգնությամբ հնարավոր եղավ բյուրեղացնել Փաստարկման երևանյան դպրոցի տեսամեթոդաբանական առանձնահատկությունները՝ աշխարհում գոր-

Саркисян. *Армения. Духовен и научен живот през вековете* (сс. 374-386). София, 2001; նույնի՝ *The Arguments of Force and The Force of Arguments: Violence and Progress in Armenian Enlightenment Thought*. In: *Progress et Violence au XVIII^e Siècle*, editO par V.Cossy et D.Dawson (pp. 145 - 163). Paris: Honore' Champion Editeur. Diffusion hors France: Editions Slatkine, 2001; նույնի՝ *International Activity of the Yerevan school for Argumentation*. In: *Изменяющееся обество. Теория и практика*. № 1,2 (сс. 34-37), ЕГУ, 2001; նույնի՝ с). *Yerevan School of Argumentation on the Threshold of the 21st Century: The Problem of Foundation*. In: *News and Views*, № 12 October (pp. 31-50), Yerevan (Armenia) - Athens (Greece) - Berkeley USA), 2006; 2007 *Yerevan School of Argumentation on the Threshold of the 21st Century: The Problem of Foundation*. In: *Perspectives of Philosophy in the 21st Century. Proceedings of the Second Annual Conference* (pp. 11-25), Athens November 24-26, 2006 և այլն:

ծող փաստարկման այլ դպրոցների հետ մշտապես տեղի ունեցող գիտական վիճաբանության համատեքստում:

- Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում մշակված տեսամեթոդաբանական այնպիսի հարցերի համալիր վերլուծությունը, ինչպիսիք են փաստարկման և տրամաբանության հարաբերակցման, փաստարկման ընթացքում ճշմարտության հիմնահարցի, փաստարկման և հիմնավորման, փաստարկման լեզվի, փաստարկման արժեքաբանական վերլուծության, փաստարկման և հռետորության հիմնախնդրները:
- Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում մետափաստարկման հիմնախնդրի առաջադրումն ու հիմնավորումը:

Տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության տեսական նշանակությունը պայմանավորված է Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում մշակված տեսամեթոդաբանական ժառանգության համալիր վերլուծության, համադրման, փաստարկման այլ դպրոցների հետ համեմատության, Փաստարկման երևանյան դպրոցի տեսամեթոդաբանական մոտեցումների բյուրեղացման և զարգացման կարևորությամբ փիլիսոփայության տեսության, տրամաբանության, փաստարկման տեսության, հռետորության տեսության զարգացման տեսանկյունից:

Ատենախոսության կիրառական նշանակությունը պայմանավորված է ատենախոսության մեջ մշակված տեսամեթոդաբանական գաղափարների և սկզբունքների կիրառելիությամբ հասարակության տարբեր ոլորտներում փաստարկման գործընթացներում, մասնավորապես՝ քաղաքական փաստարկման բնագավառում: Ատենախոսության տեսամեթոդաբանական արդյունքները կարող են կիրառվել նաև փիլիսոփայության տեսության և մեթոդաբանության, տրամաբանության, փաստարկման տեսության, հռետորության, ներազդման հոգեբանության խնդիրներին վերաբերող բուհական դասընթացներում:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնական գաղափարներն ու եզրահանգումները քննարկվել են Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնում (16.10.2012 թ.), Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի և ՀՊՄՀ փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի համատեղ նիստում (26.06.2012 թ.), և մի շարք միջազգային գիտաժողովներում հեղինակի կողմից կարդացած զեկուցումներում (Երևան՝ 1989 թ., Սանկտ-Պետերբուրգ՝ 1992 թ., Տուրկու՝ 1992 թ., Բեռլին, Հալե՝ 1997 թ., Լայբցիգ՝ 2002 թ., Երևան՝ 2005 թ., Աթենք՝ 2006 թ., Լոս-Անջելոս՝ 2007 թ., Երևան՝ 2010 թ., Երևան՝ 2011 թ., 2012 թ.):

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլվել են նաև հեղինակի *Փաստարկման հարցերը հայ փիլիսոփայական մտքի պատմության համատեքստում* երկհատորյա մենագրությունում, երկու գրքույկներում և քսանվեց հոդվածներում (հրատարակված Երևանում, Ամստերդամում, Բեռլինում, Փարիզում, Աթենքում, Սոֆիայում)՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն և բուլղարերեն լեզուներով:

Այդ աշխատանքներում վերհանվում, լուսաբանվում և քննական վերլուծության են ենթարկվում Փաստարկման երևանյան դպրոցի առաջացման,

ծնավորման պատմությունը, Դպրոցի առանձնահատկությունները՝ տեսական, մեթոդաբանական և իմացաբանական տեսանկյունից:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է Առաջաբանից, չորս գլխից, որոնցից առաջին երեքը ընդգրկում են երեքական, իսկ չորրորդը՝ վեց ենթագլուխ, Եզրակացությունից, Մեջբերված ու հղված գրականությունից:

Ատենախոսության ծավալը 381 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Առաջաբանում հիմնավորվել է հետազոտվող թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվել են խնդրո առարկայի մշակվածության աստիճանը, հետազոտության մեթոդաբանական հիմունքները և մեթոդիկան, վերհանվել են ատենախոսության գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, տրվել են հիմնական գրականության համառոտ բնութագիրը և զնահատականը, հետազոտության փորձաքննությունը, կառուցվածքը, ծավալը և որոշ մանրամասներ օգտագործված աղբյուրներից քաղվածքներ կատարելու եղանակի, ինչպես նաև՝ մեջբերված և հղված գրականության ցանկի մասին:

Առաջին գլուխը, որը կրում է *Փաստարկման տեսության տարրերը հայ միջնադարյան փիլիսոփայական մտքում* խորագիրը, նվիրված է հայ փաստարկման ուսմունքների պատմության երեք ակնառու դեմքերի՝ Եզնիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի և Գրիգոր Տաթևացու տեսական ժառանգության մեջ փաստարկման հարցերի քննությանն ու լուսաբանմանը:

Առաջին ենթագլխում՝ *Եզնիկ Կողբացին և փաստարկման տեսության հարցերը*, իրականացվել է փաստարկման խնդիրների հետազոտությունը *Եղծ աղանդոցում*: Վերջինս դիտարկվել է երեք տեսանկյունից՝ ըստ փաստարկման իմաստաբանության, շարահյուսության և կանոնավորության նախապայմանների: *Եղծ աղանդոցում* դրսևորվող փաստարկման իմաստաբանությանը հատուկ ելակետային հասկացությունները՝ *գրույց, բանակերիվ, վիճաբանություն, քննարկում*, բացահայտ կամ ոչ բացահայտ երկխոսության իմաստ են արտահայտում, ունեն իմացաբանական մեծ նշանակություն, վերաբերում են փաստարկման ձևին և գործածվում են իրենց հետ սերտորեն առընչվող այնպիսի հասկացությունների զուգակցմամբ, ինչպիսիք են՝ *քննել, քննելի, անքննելի, յուրայիններ, բարեկամներ, ունկնդիր, հակառակորդ, փաստարկ, փաստարկվկայություն, ապացույց, ապացուցում, հաստատում, հիմնավորում, պատճառաբանություն-հիմնավորում, պնդում, համոզում, ընդունում, ընդունելի, անընդունելի, հերքում, հանդիմանում, մեղադրում, մեղադրելի, պարսավանքի արժանի, դատապարտում, մերժում, կշտամբում, ժխտում, ինքնաժխտում, խայտառակում* (հերքելու, կարծիքը մերկացնելու իմաստով), *նպատակ, նպատակադրում, կարծիք, ակնհայտություն, ակներևություն, բացահայտ, ոչ բացահայտ, միտք (խոսք) և գործողություն, հարց, հարցում, հարց-պատասխան, հարց-հակափաստարկ, հարց-հակադրույթ* և այլն:

Ըստ Կողբացու, փաստարկման ընթացքում հարցումն ունի «սանձահարող» դեր և այսպիսի ըմբռնմամբ թերևս կարելի է բացատրել հարցի տարատեսակների բազմապիսի դրսևորումները *Եղծ աղանդոցում*, որոնք ամենաընդհանուր ձևով դասակարգվել են հետևյալ խմբերում. *հնարավոր հարց-հակափաստարկի ձևակերպում և հերքում, առկա հարց-հակափաստարկի առա-*

ջաղրում և հերքում, հակառակորդին ուղղակիորեն ուղղված հարցերի շարք, դիմում անմիջապես հակառակորդին, որը նպատակ ունի մերկացնել հակառակորդի դրույթների անհեթեթությունը, հարց-դրույթ, որը հաճախ ձևակերպվում է քննմող խնդրի շուրջ ծավալվող բանավեճի սկզբում, իսկ երբեմն էլ վերջում՝ իբրև ամփոփում, հարց ու պատասխանի շարադրում, որը նպատակ ունի սոսկ բացատրել, մեկնարկել առաջադրված դրույթը, այն բովանդակող նյութը, հարց-հիմնավորում՝ ուղղակիորեն ուղղված ընթերցողին, հարց-փաստարկ, որոնց առաջադրմամբ հեղինակը հերքում, ի չիք է դարձնում հակառակորդի դրույթներն ու փաստարկները:

Երկրորդ ենթադասում՝ Փաստարկման խնդիրները Դավիթ Անհաղթի փիլիսոփայական ժառանգության մեջ, փաստարկումը դիտարկվել է որպես որոշակի գիտական տեսության լեզու՝ իր համապատասխան իմաստաբանությամբ և շարահյուսությամբ: Փաստարկման հասկացությանը կազմը դիտվել է որպես փաստարկման լեզվի իմաստաբանություն, իսկ դրա մեթոդներն ու հնարները՝ որպես նույն լեզվի շարահյուսություն, որոնց նկատմամբ ցուցաբերվել է համատեքստային մոտեցում, այլապես այն կդիտարկվեր որպես մի բառացանկ, որը հայտնի չէ, թե որքանով կկազմեր փաստարկման լեզվի իմաստաբանությունը կամ շարահյուսությունը: Քննության են ենթարկվել Դավիթ Անհաղթի ըմբռնումները փաստարկման կառույցներում և վերակառուցվել են տրամաբանական հասկացությունների դաշտը (կշռադատություն (հավաքում), սիլլոգիզմ, փաստարկ (ծեռնարկութիւն), հակափաստարկ, ընդունելի և անընդունելի փաստարկ, ակներև, ակնհայտ փաստարկ, դրույթ (արտադրեսցուք, ասացուածն, ասացուածք, կազմունք, բան, առած, առաջարկութիւն), հակադրույթ, առաջադրույթ, ապացույց (ընտրագումիւք), հիմնավորում, նախադրյալ, եզրակացութիւն, հիմք, պնդում, հավաստիութիւն և այլն), հոգեբանական հասկացությունների դաշտը (համոզում, համոզումը, կարծիք, հեղինակություն և այլն), իմացաբանական հասկացությունների դաշտը (ճշմարտություն, աշխարհի անձանաչելիութեան ժխտում, իմացության անսահման հնարավորության ընդունում, փորձը որպես իմացության արդյունք, իմացության գիտելիթի տեսակները, զգայական իմացության սահմանափակությունները, տեսության և պրակտիկայի փոխհարաբերությունները և այլն), փաստարկման հարակից հասկացությունների դաշտը (զրույց, վեճ, վիճաբանություն, բանավեճ, քննարկում, ունկնդիր (դատաւոր), համամասնակից (ունական, ընդունական), հակառակորդ (ընդդիմակազուք), կողմնակից (մերոցն, ձայնակից) և այլն) կազմող հիմնական տարրերի կապակցությամբ:

Դավիթ Անհաղթի երկերում փաստարկման լեզվի շարահյուսությունը կազմող հնարներն ունեն առավել բովանդակային, քան ձևական բնույթ և առավելագույնս նպաստում են ունկնդրի կողմից փաստարկման հուզական ընկալմանն ու յուրացմանը: Դրանց մեջ առանձնանում են՝

- տրամաբանական մեթոդները՝ բաժանումը, սահմանումը, ապացուցումը (իսկական ապացուցում՝ դեդուկցիա, մակածություն՝ ինդուկցիա, հարազույց՝ համանամանություն), վերլուծությունը, հերքումը (եղծում, կործանում, առարկություն, լամդիմանութիւն, ընդդիմաբանութիւն, ընդդիմակայութիւն կամ հակառակորդին «անհաշտ վիճարկելու» եղանակ, ընդդիմալարակայութիւն կամ հակառակորդի դրույթները «իրավահավասար վիճարկելու» մեթոդ, բառնայր), հաստատումը (հաստատում բաժանման միջոցով, հաստատում օրինակների օգնությամբ, հաստատում ապացուցման միջոցով, հաստատում փաստարկների

վկայակոչմամբ, հաստատում կրկնակի ժխտմամբ, պայմանական դատողության սահմաններից մեկի հաստատումը հանգեցնում է մյուս սահմանի հաստատմանը), սիլոգիզմը (ապացուցական, դիալեկտիկական, ճարտասանական, իմաստական, քերթողական):

- **Արժեքները, արժեքային չափանիշներն ու կողմնորոշիչները** (օգտակարություն, կարևորություն, հաճելիություն), որոնք ստանձնում են փաստարկային գործընթացի հոգեբանական և բարոյական դրոպապատճառների կարգավորիչի դեր:
- **Հոգեբանական տեսանկյունները և գործոնները** (հեղինակավոր կարծիքը, որն արդեն իսկ սկզբունք է, փաստարկման կանոն, համոզումը, ընդդիմախոսի (կամ ունկնդրի) համոզմունքի ձևավորումը, ներքին համոզվածությունն ու ինքնահագումը), որոնք առանձնանում են փաստարկման արտատրամաբանական գործոնների շարքում: Համոզման բաղադրատարրերն են ճարտասանությունը և տրամաբանական փիլիսոփայությունը, որը հիմնվում է ճշմարտության վրա:
- **Բարոյագիտական սկզբունքները, մոտեցումներն ու տեսանկյունները**, դիտարկվել են այդ խնդիրների արխիտոտեյան մեկնության հետ համեմատության դիրքերից. բարիքը Արիստոտելի բարոյագիտական ուսմունքում, բարիքը Դավիթ Անհաղթի երկասիրություններում, բարիքը և կատարյալ փիլիսոփան, տեսական և գործնական փիլիսոփայություն, բարիք և ճշմարտություն, փիլիսոփայության և դրա մասերի բաժանման անհրաժեշտությունն և եղանակները, «միտք և գործողություն», «փիլիսոփայություն և գործիք», Արիստոտելի առաքինությունների, դրանց դասակարգման և ձեռքբերման եղանակների մասին, առաքինությունն ըստ Դավիթ Անհաղթի, «առաքինի կեցադավարություն», արդարություն և ճարտասանություն:
- **Հարցադրումը** (հարց, հռետորական հարց, սադրանքային հարց, դիալեկտիկական հարց, հարց-հակափաստարկ) որպես փաստարկման մեթոդ:
- **Գործելակերպին, նպատակին** («կատարումն», նաև՝ «դիտաւորութիւն») դիմելը, մերձավոր և հեռավոր («հուպ» և «հեռի») նպատակների տարբերակումը փաստարկման ընթացքում:
- **Հռետորությունը և հռետորական միջոցներ:**
- **Այլ կարգի հնարներ.** աշխատության խորագրին դիմելը, «վարդապետական» եղանակների կատարելագործումը», հարցերի քննարկման նկատմամբ մոտեցման տարբեր մակարդակների կիրառումը, ուսումնասիրությունն ու մետաուսումնասիրությունը, օրինակների միջոցով լուսաբանումը, հարցերի քննարկման հաջողականության պահպանումը, քննվող խնդիրների մեջ կարևորագույնը կարևորից, իսկ վերջինս էլ՝ երկրորդականից տարբերակելը, կարևորությունը որպես քննվող խնդիրների տարբերակման չափանիշ և այլն:

Երրորդ՝ Փաստարկման տեսության տարրերը Գրիգոր Տաթևացու տեսական մոտեցումներում, ենթազխում փաստարկումը դիտարկվել է իբրև երկխոսություն՝ իրականացված հաճախ որպես բացահայտ հարց ու պատասխան, իսկ երբեմն էլ՝ անուղղակիորեն, որպես մենախոսություն-շարադրություն, որը ևս բովանդակում է երկխոսության տիպական հատկությունները: Քննելով փաստարկման ձևի խնդիրը՝ Տաթևացին առակը գնահատում է որպես խոսքը (բանը) հիմնավորելու, ասվածը բացատրելու, փաստարկելու յուրօրինակ

նակ «պիտանի» եղանակ, և որովհետև այն «Սիրելեացն յայտնի է... եւ յօտարաց եւ յանարժանիցն ծածկելալ»²³, ուստի՝ դիտվում է նաև որպես մտքի ոչ բացահայտ ձևերը բացահայտ ձևերի օգնությամբ վերհանելու լավագույն միջոց, քանզի վառ և ակնառու օրինակներն ու փաստարկները լսելու միջոցով մարդը կարողանում է վերհանել մտքի աներևույթ կողմերն ու նրբերանգները. «Ի լսելն երեւելի օրինակաւ եւ բանին զաներևոյթքն իմանամք ի միտս»²⁴:

Պատգամելով լռությամբ պատվել այն, ինչ անհասն և անճառն է, այսինքն ենթակա չէ քննության մեր գիտելիքների ոչ լրիվության և սահմանափակության պատճառով, Տաթևացին անենևին էլ չի նպատակադրվում հետ պահել մարդկությանը ոչ բացահայտի իմացությունից, ենթատեքստի և համատեքստի վերհանումից, այլ ընդամենը փորձում է կամխել *երես ունեցող* բացահայտ մտքի հնարավոր շփոթն ու դրա «կորուստը», որովհետև շատ դեպքերում միևնույն տեքստը կարող է ունենալ միմյանց հաջորդող, մինչև իսկ մեկը մյուսից թաքնված մի շարք ենթատեքստեր, որոնց բացահայտումն անենևին էլ պարզունակ գործողություն չէ, քանի որ այն կարող է շեղվել առկա մտքից, մինչև իսկ այն աստիճան, որ կարող է հակասել դրան²⁵:

Ըստ Տաթևացու, խոսքը (բանը) ունի հայտնի և ծածուկ կողմեր, այնպես, ինչպես որ ջրիորն ունի երես և խորություն: Ծածուկ մասում էլ հենց թաքնված են իմաստության և գիտության գանձերը: «Առակավոր խոսքի»՝ որպես փաստարկման միջոցի, առավելությունը *դյուրալուր*, ունկնդրին հաճելի, «ախորժ լսողաց» լինելն է, ինչի պատճառով էլ այն առավել տպավորիչ և անջնջելի կերպով է մնում մարդկային մտքում, պայծառացնում է միտքը, լուսավորում խոսքի մեկնությունը, իսկ վարդապետական կանոնները խոսքը մեկնող խրատներ են, որոնցով վարդապետները՝ որպես ճշմարտության աշակերտներ, խոսում են, գրում և քարոզում:

Դատելով համատեքստից, կարելի է ասել, որ Տաթևացու մոտ բան հասկացությունը, որ աշխարհաբարյան թարգմանությունում հանդես է գալիս «խոսք» բառով, համիմաստ է փաստարկում հասկացությանը և, որ բան հասկացության խոսք և միտք իմաստներին Տաթևացին ավելացնում է երրորդ՝ փաստարկում իմաստը: Այսպիսի մոտեցման դեպքում, կարելի է պնդել, որ Տաթևացին տարբերում է փաստարկման երեք տիպ. մարդու անենօրյա փաստարկումը (հասարակաց բան), աշակերտներին ուղղված առակներով ուսուցողական փաստարկումը (առակավոր բան) և կարծիքը (իմաստութեամբ բան): Ստացվում է, առակը փաստարկային խոսք է, որն ավելրապահորեն առնչվում է գործողության հետ: Մինչև իսկ իմաստության գնահատման չափանիշը գործն է, աշխատանքը. «Ե՛րթ առ մեղուն եւ ուսի՛ր գիարդ գործունեայ է եւ այլն: Սոյնպէս եւ իմաստութիւն աշխատութեամբ քննի»²⁶: Այս պահանջն այսօր էլ կիրառվում է փաստարկման ժամանակակից որոշ տեսություններում և արտահայտում է մտքի ու գործողության անքակտելի կապը, դրանով իսկ ընդլայնելով այդ տեսության իրավասությունները սոսկ ինքնանպատակ մտավարժությունից դեպի փաստարկային կշռադատության ընթացքում ձեռք բերված եզրահանգումների գործնական կիրառությունը:

²³ Գրիգոր Տաթևացի. *Սողոմոնի առակների մեկնությունը*, Երևան, 2000, էջ 14:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Այս մասին տե՛ս նաև, Ա.Բրուտյան, Գ.Բրուտյան. *Քաղաքական փաստարկման 101 կանոն*, Երևան, 2003, էջ 61:

²⁶ Գ.Տաթևացի, *Սողոմոնի առակների մեկնությունը*, էջ 146:

Իրականացնելով առակի, որպես փաստարկման լավագույն միջոցի, և դրա արժևորման խնդրի հիմնավորումը, Տաթևացին քննում է առակի ձևի հարցը, պարզելով, որ այն չափածո է, քանզի բարոյական առաքինություն սերմանող խրատ է՝ ուղղված մանուկներին և պատանիներին, ովքեր կարիք ունեն սովորելու և ամենից առաջ հենց նրանց նկատմամբ է կիրառելի փաստարկումը, որովհետև մանկությունն ինքնին ընդունայն է, անմիտ, փոփոխական, անկայուն ու տատանվող, չի խուսափում չար գործերից, կարծելով, թե մահը հեռու է և դեռ կհասցնի բարիք գործել, հեշտասեր է և հագուրդ է տալիս սուր ու երիտասարդ զգայարանների ցանկություններին²⁷:

Իմաստուն խոսքը պատիվ է բերում ունկնդրին, ով շահում է, քանզի փաստարկողի նման «Ունկնդիրն իւր սեփհականէ զբանն, որպէս ասացողն, որպէս ասէ առակ. լուարու'ք զիմաստութիւն եւ իմաստնագոյն լերուք», իսկ իմաստուն խոսքն արհամարհում են միայն հիմարները. «Իմաստուն բանք, որք ոչ դնեն ունկն, մարգարիտ է արկեալ խոզաց»²⁸:

Սխալ ու կեղծ փաստարկումը դատապարտված է անհաջողության, քանզի չունի աղ, «հերձվածողի» խոսքը չպետք է մտնի եկեղեցի անգամ երգի տեսքով, որովհետև միշտ էլ կա վտանգ, որ չար ծառը կարող է չար պտուղ տալ: Մարդն ունի կամքի ազատություն և անհնար է ու նաև սխալ նրան բռնի դեպի առաքինություն մղելը: «Ձի թէ բռնի ձգեր զմեզ յառաքինութիւն, յայնժամ հանէր զմեզ յանձնիշխան կամաց. ծասն այն նախ մեք կամիմք՝ և ապա նա առաջնորդէ, և ի հաճոյսն իւր կատարէ»: Այս պատվիրանը չափազանց օգտակար խրատ է փաստարկման գործընթացում փաստարկունն իրականացնողի համար: Չէ՞ որ նույնիսկ Աստված չի հրամայում, չի պարտադրում, այլ հորդորում է, բացատրում, սովորեցնում: Տաթևացին ջատագովում է այնպիսի փաստարկումը, որը չի սահմանափակում ունկնդրի, լսարանի ակտիվությունը և նրան չի պարտադրում ճշմարտությունը. մարդը պետք է գործի հոծաբ խոսքով և կամքով, քանզի չի կարելի մարդուն անձնիշխանությունից զրկել և բռնի դնել ճշմարիտ ուղու վրա²⁹:

Ուշագրավ է, Տաթևացու վերաբերմունքը փաստարկման ընթացքում ճշմարտության դերի գնահատման հարցում. ճշմարտությունն իմացության չափանիշն է³⁰: Ճշմարտությունը իմաստունի զենքն է և պահպանում է նրան զարհուրանքներից³¹:

Փաստարկման գործընթացի կազմակերպման տեսանկյունից արժեքավոր են Տաթևացու՝ «լեզուն հեշտությամբ է սայթաքում և սահում», ուստի՝ «յոթն անգամ խորհի՛ր, մեկ անգամ խոսի՛ր» *խրատը*, իսկ ճիշտ խորհելու կարևոր գործոններից մեկն էլ, ըստ հայ վարդապետի, լռելն է³²: Լռելու գործոնը փաստարկման ընթացքում բազմիցս կարևորել է ակադեմիկոս Գ.Բրուտյանը³³: Ըստ նրա, փաստարկումը սկսվում է լսելուց, իսկ լսել՝ նշանակում է

²⁷ Նույն տեղում, էջ 14:

²⁸ Նույն տեղում, էջ 140:

²⁹ Տաթևացի, *Սողոմոնի առակների մեկնությունը*, էջ 52:

³⁰ Գ.Տաթևացի, *Թևակոր խոսքեր և ասույթներ*, էջ 50:

³¹ Գ.Տաթևացի, *Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր*, էջ 150:

³² Գ.Տաթևացի, *Թևակոր խոսքեր և ասույթներ*, էջ 52:

³³ Իր *Փաստարկման տեսության ակնարկ* սենագրությունում Գ.Բրուտյանը նույնիսկ մի ամբողջ ենթավերնագիր է նվիրել այդ խնդրի լուսաբանմանը: Ուշագրավ է նաև վերջինիս խորագրի ձևակերպումը. *Լսելը և լռելը*: Տե՛ս Գ.А.Брутян, *Очерк теории аргументации*, էջ 113:

լռել: Լսելու, լռելու և խոսելու հերթափոխությունը լուրջ և դժվարին գործընթաց է: Ստային հաղորդակցման պրակտիկայում խոսքի, լռության, մտքի փոխհարաբերության Տաթևացու ընթացումն այսպիսին է. «Յորժամ շարժե՞ գրեզ ծայնն քան զբանն, լավագոյն է լռելն», «Երբեմն պարտ է լռել եւ երբեմն քաղցրութեամբ խրատել եւ երբեմն խստութեամբ յանդիմանել»³⁴, «Որքան մարդ լռէ եւ խոկայ զբանն, այնչափ պարզի բանն»³⁵:

Փաստարկման ընթացքում լսելու, լռելու պատվիրանին զուգընթաց Տաթևացին կարևորում է խոսքի դարձվածքներն ընկալելու պահանջը, որը վերաբերում է պատասխանին: Պետք է հարցնել և քննելով ստույգն իմանալ. «Դարձուածն բանիցն պատասխանին է, այսինքն, զինչ է պարտ աշակերտին. միայն լսել ի խրատողն եւ դիրսահաւան լինել...» և «պարտ է դարձեալ հարցանել եւ քննութեամբ զստոյգն դիտել...» և ապա դիմում է ունկնդրին. «Նոյնպէս եւ դու, ով մանուկ, ...յորժամ խրատողն քարոզէ քեզ... յայնժամ դու մի՛ պահեր զմիտքդ ի տարակոյս... Ջպատճառն, թէ վասն է՞ր հրամայես զայս, եւ նա կարող է ի դարձուած բանիցն ճշմարիտ արդարութիւն ի քեզ ուղղել»³⁶:

Ըստ փաստարկման էթիկական նախապայմանի, փաստարկման ընթացքում խիստ կարևորվում է որոշակի թույլատրելի և անթույլատրելի գործոնների տարբերակումը և խնդիր է դրվում հրաժարվել որպես անթույլատրելի որակված հնարներից, որպիսիներից են՝ սպառնալիքը, ուժի դիրքերից հայտարարություններն ու նման տիպի այլ գործոններ: Տաթևացու համոզմամբ ևս իմաստությունը նախընտրելի է ուժից, զորեղությունից. նա, ով ուժ ունի, իսկ խելք՝ ոչ, վնասվում է, իսկ նա, ով ունի իմաստություն, բայց չունի ուժ, տիրում է ամեն ինչի և հնազանդեցնում թշնամիներին³⁷: Թագավորներն ու իշխաններն առհասարակ պետք է առաջնորդվեն փաստարկմամբ և գիտակցելով վերջինիս դերը որպես տարածայնությունների և վիճաբանությունների հաղթահարման, դրանց վերացման միջոցի, գործնականում կիրառեն այն: Այսպիսի մոտեցման դիրքերից նա հարկ է համարում քննել «Խորհուրդք մտօք պատրաստեսցի եւ պատերազմ իմաստութեամբ մղեսցի»³⁸ ասույթը: Թագավորը փրկվում կամ հաղթում է ոչ թե «ի բազում զօրս իւր», և հսկան էլ հաղթում է ոչ թե «ի բազում զօրութեան իւրում», այլ իմաստությամբ, որը դրսևորվում է զորապետի բարեպաշտությամբ և արդարամտությամբ, նրա առաջնորդելու կարողությամբ, զորքին քաջալերելու, արիություն, տոկունություն, փոխօգնություն սերմանելու, հորդորելու ունակությամբ, ամբարիշտների նկատմամբ անհանդուրժողականությամբ և բարիների ու հնազանդների նկատմամբ բարեգործությամբ, նրա ողորմածությամբ և ճշմարտասիրությամբ, սուտ չխոսելու, չխաբելու գիտակցումով: Մարդը սուտ է խոսում տկարության պատճառով, երկյուղից դրդված, մինչդեռ թագավորը կարող է և հզոր, չի վախենում որևէ մեկից, ուստի չպետք է ստի կամ խաբի:

Տաթևացին անդրադառնում է նաև փաստարկման ընթացքում հռետորական միջոցներին. ա) բարի խոսք, կարգավոր խոսք, մեղմ և հարմար ասող ծայն, իսկ չար, անկարգ, աղաղակող և շտապողական խոսքը հուզում, խռովում ու կարծրացնում է ունկնդրի միտքը, ինչի արդյունքում փաստարկումը

³⁴ Գ.Տաթևացի, *Փիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր*, էջ 42:

³⁵ Նույն տեղում, էջ 52:

³⁶ Նույն տեղում, էջ 18:

³⁷ Նույն տեղում, էջ 180)

³⁸ Տաթևացի, *Սողոմոնի առակների մեկնությունը*, էջ 104:

դառնում է անարդյունավետ՝ «ունայն մնա բանս»³⁹ . բ) «կարճ և գեղեցիկ» խոսք «ոչ ոք կարէ պատճառել չուսանիլ վասն երկարութեան»⁴⁰ . գ) հրապարակավ հնչող համարձակ խոսք⁴¹ .

Փաստարկման կարևոր գործոն է ինքնաքննադատությունը, սեփական սխալների բացահայտումն ու մատնանշումը, դրանց բազմակողմանի վերլուծությունը, ուղղումն ու քննարկումը. «Նախ զքեզ դատեա և ուղղեա. և ապա զայլս. և անկաշառ և առանց ակնառութեան և առանց երկիւղի՝ և իմաստութեամբ ցրատաստանն քննեա. և որպէս դու զայլս դատես՝ աստված զքեզ է դատելոյ»⁴² : Ինքնաքննադատություն իրականացնելու համար մարդը պետք է ունենա ինքնաճանաչում, ինչպես նետը, որ չունի ինքնաճանաչում, անզգա է, չի կարող նշանակետին ինքնուրույն հասնել, եթէ չի ուղղվում նետողի կողմից⁴³ : *Խրատիչ և ուղղիչ* չունեցող առաջնորդ փաստարկողի համար ոյուրին չէ ինքնակառավարումն ու ինքնահսկողությունը, որովհետև թեպետ նա խրատուն է իր ենթականերին ու իրեն հնազանդվողներին, բայց «Ոչ ուղղի. զի ոչ ունի ի վերոյ ինքեան խրատոյ»⁴⁴ :

Երկրորդ գլուխը՝ Փաստարկման երևանյան դպրոցի կայացման գործընթացի առանձնահատկությունները. ընդգրկում է Դպրոցի բազմակողմանի գործունեության տեսանթողաբանական և իմացաբանական վերլուծությունը՝ սկսած դրա սկզբնավորումից մինչև մեր օրերը : Ներկայացվել է Դպրոցի ինստիտուցիոնալացման գործընթացը՝ ներառյալ դրա գործունեության շրջանակներում իրականացված գիտաժողովները, տեսական սեմինարները, դասախոսությունները՝ Յայաստանում և արտերկրում :

Առաջին ենթագլխում՝ Փաստարկման երևանյան դպրոցի ձևավորման և ինստիտուցիոնալացման գործընթացը, վերհանվել են Դպրոցի առաջացման տեսական հիմքերը : Պայմանականորեն Երևանյան դպրոցի ձևավորման սկիզբը համարվել է 20-րդ դարի 70-ական թվականները, երբ առաջին անգամ Երևանում և Մոսկվայում լույս տեսան ակադեմիկոս Գ.Բրուսյանի խնդրո առարկայի շուրջ որոշ հետազոտությունները, և, երբ Երևանի պետական համալսարանի *Դիալեկտիկական մատերիալիզմի և տրամաբանության* ամբիոնն իր հիմնական խնդիրը դարձրեց փաստարկման հիմնահարցերի հետազոտությունը : Ամբիոնում կազմակերպվում էին փաստարկման տեսության հիմնահարցերին նվիրված տեսական սեմինարներ, որոնք աստիճանաբար ընդգրկեցին երևանյան բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտահետազոտական ինստիտուտների զգալի թվով աշխատակիցների : 1978 թ. Մոսկվայի *Философские науки* ամսագրի առաջին և երկրորդ համարներում շարունակաբար (որն աննախադեպ երևույթ էր) հրատարակվում է Գ.Բրուսյանի *Փաստարկման փիլիսոփայական բնույթը և փիլիսոփայական փաստարկման բնույթը* (*Философская природа аргументации и природа философской аргументации*) հոդվածը, որն անմիջապես արձագանք է գտնում ԱՄՆ-ում : Այն թարգմանվում է անգլերեն լեզվով և հրատարակվում *Փիլիսոփայություն և հռետորություն* (*Philosophy and Rhetoric*) ամսագրում՝ *Փիլիսոփայական փաստարկման մասին* (*On Philosophical Argumentation*) վերնագրով : 1979 թ.

³⁹ Տաթևացի, *Գիրք քարոզութեան, որ կոչի Չմեռան հատոր*, էջ 180 :

⁴⁰ Նույն տեղում, էջ 309 :

⁴¹ Նույն տեղում, էջ 211 :

⁴² Տաթևացի, *Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր*, էջ 53 :

⁴³ Տե՛ս Տաթևացի, *Ոսկեփողիկ*, էջ 14 :

⁴⁴ Նույն տեղում, էջ 101 :

հրատարակվում է Գ.Բրուսյանի *Փիլիսոփայական գիտելիքի վերլուծության ակնարկ* (Очерки по анализу философского знания) գիրքը, որի երկրորդ գլուխը՝ *Փիլիսոփայությունը և փաստարկումը* (Философия и аргументация), նվիրված էր փաստարկման տեսությանը: 1982 թ. Մոսկվայում *Փիլիսոփայության հարցեր* (Вопросы философии) առաջատար ամսագրում լույս է տեսնում Գ.Բրուսյանի *Փաստարկում (ընդհանուր բնութագիր)* (Аргументация (общая характеристика)) հոդվածը: Այդ և հետագայում Մոսկվայում հրատարակված նրա *Փաստարկման տեսության հրատապ պրոբլեմների հետազոտության հեռանկարները* (Перспективы исследований актуальных проблем теории аргументации), *Չեղարքրության նոր ալիք փիլիսոփայական փաստարկման նկատմամբ* (Новая волна интереса к философской аргументации) հոդվածները անհետք չեն մնում: Խորհրդային Միության բարձրագույն կրթության նախարարությունը մտցնում է արմատական փոփոխություն *Տրամաբանություն* առարկայի դասավանդման մեջ և դասընթացի *Ապացուցում և հերքում* բաժինը խորագրվում է՝ *Փաստարկման տրամաբանական հիմունքները*:

1984 թ. Երևանում կազմակերպված փաստարկման հարցերին նվիրված համաժողովում զեկուցումներով հանդես են գալիս փիլիսոփաներ, տրամաբաններ և հարակից բնագավառների ներկայացուցիչներ Ռուսաստանի տարբեր քաղաքներից: Հատկանշական է, որ բոլոր զեկուցումները գրված էին երևանյան փիլիսոփաների փաստարկմանը նվիրված հետազոտությունների հիման վրա: Հատկապես ակտիվ էր Մոսկվայի պետական համալսարանի դոցենտ Ա.Ալեքսեևը, ով հենվելով փաստարկմանը նվիրված հետազոտությունների վրա, պաշտպանում է դոկտորական ատենախոսություն (այդ թեմայով առաջինը Մոսկվայում), ստանում է պրոֆեսորի կոչում և ընտրվում Մոսկվայի պետական համալսարանի ամբիոններից մեկի վարիչ: Նրա աշխատությունների շուրջը համախմբվում են մոսկվացի որոշ փիլիսոփաներ՝ ըստ էության դառնալով Փաստարկման երևանյան դպրոցի կառույցը (թերևս՝ ոչ ձևական):

Փաստարկման հետազոտությունների հետ կապված ակտիվ գործունեություն են ծավալում սանկտ-պետերբուրգի փիլիսոփաները՝ Մ.Սլաստյոնովը (ով ԵՊՀ-ում պաշտպանում է *Փաստարկման տրամաբանական և արտատրամաբանական տեսանկյունները* թեմայով ատենախոսություն (ընդդիմախոսներ՝ փ.գ.դ., պրոֆ. Ռ.Տիջյան, փ.գ.թ., դոցենտ Ա.Ոսկանյան, առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտ), որը գրված էր հիմնականում Երևանյան դպրոցի տեսաբանների հետազոտությունների հենքի վրա), Վ.Չուեշովը (ով առաջինը Սանկտ-Պետերբուրգում պաշտպանում է փաստարկմանը նվիրված դոկտորական ատենախոսություն⁴⁵), նշանավոր պրոֆեսորներ Ի.Բրոդսկին, Վ.Բոյկովը, երիտասարդ հետազոտողներ Ջ.Իլատովան, Մ.Վոլչենկոն և այլք: 1990 թ. սանկտ-պետերբուրգի փիլիսոփաները կազմակերպում են գիտամեթոդական գիտաժողով՝ *Լսարանի*

⁴⁵ Գ.Բրուսյանին ուղղված նամակում գրում է. «Հարգարժան Գեորգ Աբելի, Ձեր աշխատություններով և կազմակերպչական կարողություններով ինձ համար արված գործերի խորը և անկեղծ երախտագիտության զգացումով Ձեզ են ուղարկում իմ համեստ աշխատանքը: Առանց Ձեզ այն չէր կարող ծնվել, չնայած դրա բոլոր թերություններն ինձ են պատկանում: Կուզեի իմանալ Ձեր չափազանց բարձր աստիճանի հեղինակավոր կարծիքը աշխատանքի մասին» (22.09.1993 թ., Հայոց փիլիսոփայական ակադեմիայի արխիվից):

հետ աշխատանքի տեսությունն ու պրակտիկան թեմայով⁴⁶, որի կազմկոմիտեի և մասնաճյուղերի կազմի նախագահ նշանակվել էր ակադ. Գ.Բրուտյանը, իսկ համանախագահներ՝ պրոֆ. Ֆ. վան Էնմերենը (Ամստերդամի համալսարան, Նիդեռլանդներ), պրոֆ. Յու.Պիետարինենը (Տուրկուի համալսարան, Ֆինլանդիա): Չորս մասնաճյուղերից քննարկվող հարցի համատեքստում հատկապես հետաքրքիր էր *Փաստարկման տեսությունը և բովանդակային ապացուցումները* մասնաճյուղը (նախագահ՝ Ի.Բրոդսկի, քարտուղար՝ Մ.Սլաստյոնով): Ավելի ուշ, ստեղծվում է Փաստարկման և հաղորդակցման սանկտ-պետերբուրգյան միջազգային կենտրոնը, որը գործում է որպես Փաստարկման միջազգային ինստիտուտի մասնաճյուղ:

Փաստարկման երևանյան դպրոցի կայացման համար մեծ դեր ունի Փաստարկման միջազգային ինստիտուտը, որը ստեղծվել է 1991 թ. երևանում, ապա՝ տեղափոխվել է Ամստերդամ, ուր գործում է առ այսօր: Ինստիտուտն ունի դիրեկտորների միջազգային խորհուրդ՝ կազմված մի շարք երկրներից (ԱՄՆ, Բելգիա, Բուլղարիա, Գերմանիա, Կանադա, Ղազախստան, Ճապոնիա, Նիդեռլանդներ, Շվեյցարիա, Չեխոսլովակիա, Ռուսաստան, Սիրիա, Ֆինլանդիա):

Փաստարկման երևանյան դպրոցի ազդեցությունը գործնական նշանակություն ունեցավ նաև որոշ հետազոտությունների համար: Նախ, երևանում և այլ քաղաքներում կազմակերպված գիտաժողովներին ակտիվորեն մասնակցում էին բելոռուս փիլիսոփաներ պրոֆեսորներ Վ.Բերկովը և Յա.Յասկևիչը: Վերջինս Բելոռուսում առաջինն էր, ում դոկտորական ատենախոսությունը՝ *Փաստարկման կառուցվածքը և դիմամիկան գիտության բնագավառում* թեմայով, ցվիրված էր փաստարկման հարցերին⁴⁷:

Ճապոնիայում մատերիալիզմի ուսումնասիրության ընկերակցության նախագահ պրոֆ. Չիկասուդու Իվասակու առաջարկով 1982 թ. Գ.Բրուտյանը *Փաստարկման ընդհանուր տեսությունը* թեմայով գեկուցումով հանդես է գալիս այդ ընկերակցության տարեկան ժողովում: Կիոտոյի *ժամանակակից դարաշրջանը և մատերիալիզմը* ամսագրում ճապոներեն լեզվով հրատարակվում է նրա *Փիլիսոփայական փաստարկում* հոդվածը: Ավելի ուշ, ընկերակցության նորընտիր նախագահ Յուտակա Սիմադայի գլխավորած ընկերակցության վարչությունը ստեղծում է փաստարկման պրոբլեմներով զբաղվող հինգ հոգուց բաղկացած խումբ, որը Ղազախստանի փիլիսոփաների հետ կկազմակերպի փաստարկման վերաբերյալ համատեղ գիտաժողովներ՝ Երևանում և

⁴⁶ Գիտաժողովի հայտագրում գրված է, որ այն իրականացել էր Ռուսաստանի *Գիտելիք* ընկերության սանկտ-պետերբուրգյան կազմակերպության շնորհիվ՝ Սևանի փիլիսոփայական ակադեմիայի, Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանի, Ավիացիոն գործիքաշինության լենինգրադյան ինստիտուտի, Պ.Տոլյատիի անվան ինժեներային էկոնոմիկայի լենինգրադյան ինստիտուտի և ԽՍՀՄ ԳԱ համակարգչային հետազոտությունների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի (Մոսկվա) մասնակցությամբ:

⁴⁷ Գ.Բրուտյանին ուղղված նամակում Յա.Յասկևիչը նշում է. «Դուք ստեղծել եք ոչ միայն Փաստարկման երևանյան դպրոցը, որի արդյունավետ գործունեությունը ճանաչվել է փաստարկման ուսումնասիրության համաշխարհային համաշխարհային կոդմից, այլև Ձեր ստեղծագործական գաղափարների և ակտիվ գործունեության շնորհիվ ստեղծվել է Սինսկի փաստարկման դպրոցը, որի շրջանակներում պատրաստվել են տասնյակ գիտությունների թեկնածուներ և դոկտորներ» (տե՛ս, *Ուղերձներ, շնորհավորանքներ*, Երևան, 2006 թ. էջ 28):

Տոկիոյում: Կկատարվի փիլիսոփաների փոխանակում, մասնակցություն ընկերակցության տարեկան ժողովներին⁴⁸:

Ավելի ուշ ճապոնացի փիլիսոփա Մասաշի Միվան խնդրում է իրեն մեկ տարով ընդունել Հայաստանում՝ աշխատանքային փորձն ընդարձակելու նպատակով: Եվ Գ.Բրուտյանը հրավիրում է Մ.Միվային Բրայտոնի համաշխարհային գիտաժողովին և զեկուցում կարդալու հնարավորություն տալիս: Հետագայում Մասաշի Միվան ընտրվում է Հայոց փիլիսոփայական ակադեմիայի արտասահմանյան անդամ (11 նոյեմբերի, 1995 թ.), այնուհետև՝ պատվավոր դոկտոր: Ճապոնացի պրոֆ. Մ.Միվայի ստեղծագործական կապը Փաստարկման երևանյան դպրոցի հետ երկար ժամանակ շարունակվում էր:

Հատկանշական է, որ 2001 թ. Սոֆիայում լույս տեսած *Հայաստան* գրքում, որտեղ ներկայացվում է հայկական գիտությունը, փիլիսոփայության, պատմագրության, աստղաֆիզիկայի և մաթեմատիկայի կողքին խոսվում է նաև Փաստարկման երևանյան դպրոցի և վերջինիս կարևոր նշանակության մասին: Երևանյան դպրոցի և Բուլղարիայի ջերմ կապի վկայություններից մեկն էլ այն է, որ 80-ական թվականներին Բուլղարիայում ստեղծված *Փաստարկում* և *հռետորություն* թեմայի ուսումնասիրության համար կազմավորված ստեղծագործական խմբի անդամները միաձայն իրենց ղեկավար ընտրեցին ակադ. Գ.Բրուտյանին:

Հայ և ֆինն փիլիսոփաների համագործակցության ձևավորման կարևորության մասին վկայում է պրոֆ. Յու.Պիետարինենը՝ նշելով, որ փաստարկումը փիլիսոփայության մեջ կենտրոնական դեր ունի, իսկ «Փաստարկման երևանյան դպրոցը երկար և ծանրակշիռ ավանդույթներ ունի»⁴⁹: Երևանյան դպրոցի ներկայացուցիչների և ֆինն փիլիսոփաների միջև հաստատվում է գիտական փոխանակության ծրագիր, ինչը, Յու.Պիետարինենի խոսքերով, մեծ դեր է խաղում ֆիննական փիլիսոփայության զարգացման գործում⁵⁰: Հայ և ֆինն փիլիսոփաների համագործակցությամբ կազմակերպվում է փաստարկման հարցերին նվիրված երկու գիտաժողով. առաջինը՝ 1988 թ. նոյեմբերի 14-17-ը՝ Ֆինլանդիայի Տուրկու քաղաքում, որտեղ զեկուցումներով հանդես եկան ինը հայ գիտնականներ, իսկ երկրորդը՝ 1989 թ. Երևանում և Սևանում:

Հայ-ֆիննական սերտ հարաբերությունները վկայում են, որ Հայոց փիլիսոփայական ակադեմիայի պատվավոր անդամների ցուցակում ֆինն փիլիսոփաների ներկայության հանգամանքը պատահական չէ: Առավել ևս, երբ խոսքը վերաբերում է այնպիսի հռչակավոր փիլիսոփաների, ինչպիսիք են՝ Յա.Հինտիկան (ընտրվել է 26.02.1991 թ.), Գ. ֆոն Վրիգտը (ընտրվել է 16.07.1993 թ.) և Յու.Պիետարինենը (ընտրվել է 16.07.1993 թ.): Հետագայում՝ Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի ստեղծման ժամանակ, առաջին երկուսն ընտրվել են որպես վերջինիս հիմնադիր անդամներ:

Հայ և ֆինն փիլիսոփաների ստեղծագործական կապերն առ այսօր շարունակվում են: Ֆինլանդիայում հետզհետե մեծանում է հետաքրքրությունը փաստարկման նկատմամբ: Դա է վկայում, մասնավորապես, *News and Views* ամսագրի հինգերորդ համարում հրատարակված՝ փաստարկման տեսաբան-

⁴⁸ Տե՛ս, պրոֆ. Սատոյի (ընկերակցության վարչության անդամ) նամակը (Փաստարկման միջազգային ինստիտուտի արխիվից):

⁴⁹ Pietarinen, J. (ed.). a) *Problems of Philosophical Argumentation. I General Problems*. Finland: 1992, University of Turku, p 2.

⁵⁰ Տե՛ս, նույն տեղում:

ների ցուցակը. Հելսինկիի համալսարանից՝ Իլյար Չալոնենը, Արտո Սիտոնենը, Պետրի Յիլկուսկին, Միկո Յուրյոնսուրին, Հոենսուի համալսարանից Սեպ Սալաման, Օուլուի համալսարանից՝ Սաիլա Անտոնենը, Էսա Պիկարայինենը, Տուրկուի համալսարանից՝ Յանի Կուուսելան, Յուհա Ռիտոլան, Վասասյի համալսարանից՝ Անիտա Նուպոնեն և այլոք: Ըստ Ֆինլանդիայից ստացված վերջին տեղեկությունների, փաստարկման տեսությունն, ասես, վերածնունդ է ապրում:

Գերմանիայում և Ավստրիայում փաստարկման վերաբերյալ կատարվող հետազոտությունների արդյունքները մեծ մասամբ հրատարակվում էին գերմաներեն: Այդ հանգամանքը որոշ չափով սահմանափակում էր կատարված հետազոտությունների մասին լրիվ պատկերացում կազմելու հարցը: Այնուամենայնիվ, որոշակի կապեր հաստատված են: Այսպես, տողերիս հեղինակը մասնակցել է 1997 թ. հուլիսի 19-27-ը Գերմանիայի Բեռլին քաղաքում Տասնութերորդ դարի հետազոտությունների միջազգային ընկերության համանախագահներ պրոֆ. Միշել Դելոնի և Ջոչեն Շլոբախի կազմակերպած *Արևելք-Արևմուտք սեմինար. առաջադիմությունը և բռնությունը 18-րդ դարում* թեմայով գիտաժողովին, որտեղ կարդացած զեկուցման տեքստը նույն թվականին Ուֆի փաստարկները և փաստարկների ուժը. առաջադիմությունը և բռնությունը հայ լուսավորչական մտքում վերնագրով հրատարակվել է *East-West Seminar: Progress and Violence in Enlightenment Thought ժողովածուում*⁵¹, իսկ 2001 թ.՝ նույն վերնագրով Փարիզում⁵²: Ավելի ուշ, նա երեք ամսով DAAD-ի հովանավորությամբ վերապատրաստվել է Լայբցիգի համալսարանում, որտեղ աշխատում են փաստարկման միջազգային ճանաչում ունեցող տեսաբաններ: Վերադառնալով Հայաստան, նա թարգմանում և հրատարակում է այդ համալսարանի պրոֆեսոր Գրոթ-Լյուք Լյուքենի *Փաստարկների առաջադրում և դրանց պատասխանում. ինֆերենցիալիզմի ներգործությունը փաստարկման տեսության վրա* հոդվածը⁵³:

Երկրորդ ենթազվածում՝ Փաստարկման երևանյան դպրոցի գիտական գործունեությունը. միջազգային և հանրապետական գիտաժողովներ, դասախոսություններ և սեմինարներ, դիտարկվում է ինչպես Դպրոցի մասնակցությունը փաստարկման հարցերին նվիրված միջազգային գիտաժողովներին, այնպես էլ դրանց կազմակերպումը, փաստարկման վերաբերյալ դասախոսությունների, ընդհանուր և հատուկ դասընթացների (այդ թվում ակադ. Գ.Բրուտյանի *Փաստարկման ընդհանուր տեսություն*, պրոֆ. Ս.Հովհաննիսյանի *Փիլիսոփայության ներածություն*, պրոֆ. Պ.Աղայանի՝ *Փաստարկման տեսության արտասահմանյան ուղղությունների քննական վերլուծությունը*, որը նա կարդում էր մինչև իր կյանքի վերջին օրերը՝ (1988 թ.), Հով-

⁵¹ *Arguments of Force and Force of Arguments in the Armenian Enlightenment*. In: East-West Seminar. Berlin 19-27.1997. Papers presented by the participants (pp. 189-203).

⁵² *The Arguments of Force and The Force of Arguments: Violence and Progress in Armenian Enlightenment Thought*. In: Progress et Violence au XVIII^e Siucle, edito par V.Cossy et D.Dawson (pp. 145-163). Paris: Honore' Champion Editeur. Diffusion hors France: Editions Slatkine.

⁵³ Լյուքեն Գ.-Լ., *Փաստարկների առաջադրում և դրանց պատասխանում. Ինֆերենցիալիզմի ներգործությունը փաստարկման տեսության վրա* (թարգմանությունը՝ Դ.Հ.Հովհաննիսյանի): Գիտական աշխատություններ, Հասարակական գիտություններ, Պրակ 2 (էջ 174-186): Երևան. *Լիճվա* հրատարակչություն:

հանճես Հովհաննիսյանի *Փաստարկում և հռետորություն*, Մ.Ավագյանի *Փաստարկման լեզուն*, Հասմիկ Հովհաննիսյանի *Փաստարկման տեսություն* դասընթացները), տեսական սեմինարների⁵⁴ (*Պաշլամենտական փաստարկման հիմնական տեսանկյունները* (Գ.Բրուտյան), *Մեթոդաբանականը պաշլամենտական էթիկայում* (պրոֆ. Զր.Շաքարյան), *Ունկնդրի (ռեցիպիենտի) դերն ու կարավիճակը պաշլամենտական փաստարկման ընթացքում* (պրոֆ. Ս.Հովհաննիսյան), *Պաշլամենտական փաստարկման տրանսբանական կառուցվածքը* (պրոֆ. Ի.Զալավսկի), *Հռետորությունը պաշլամենտական պրակտիկայում* (դոց. Ա.Վարդումյան), *Փաստարկման դերը պաշլամենտական քվեարկության ժամանակ* (դոց. Ա.Բաղդասարյան), *Ճշմարտության պրոբլեմը պաշլամենտական վիճաբանության ժամանակ* (սասիրանտ Զ.Թադևոսյան), *Փաստարկման հետազոտության հրատապ խնդիրները* (ակադ. Գ.Բրուտյան), *Հարցի կառուցվածքը և տեսակները* (ուսանող Ա.Ամիրխանյան), *Հռետորության ընդհանուր բնութաբանությունը* (դոց. Ա.Վարդումյան), *Հինտիկայի տեսությունը հարցի պրոբլեմի մասին* (ուսանող Ա.Ամիրխանյան), *Քաղաքական փաստարկում* (հ.թ. Ս.Ճշմարիտյան, Ա.Քալանթարյան), *Իրավաբանական փաստարկում* (հ.թ. Ս.Ճշմարիտյան, ուսանող Խ.Գալստյան), *Փաստարկումը և մեկնաբանումը* (պրոֆ. Ս.Հովհաննիսյան, ուսանող Վ.Հարությունյան), *Փաստարկման տրանսբանական բաղադրատարրերը* (պրոֆ. Ս.Հովհաննիսյան, ուսանող Գ.Պետրոսյան), *Փաստարկման արժեքային - էթիկական մոտեցումը* (պրոֆ. Զր.Շաքարյան), *Տրանսբանության դերը փաստարկման ընթացքում* (պրոֆ. Ի.Զալավսկի) իրականացնումը:

Փաստարկման երևանյան դրպոցի ձևավորումն ու կայացումն անմիջապես կապակցված է Հայաստանում և արտերկրում փաստարկման թեմաներով գիտաժողովներին մասնակցելու և գիտաժողովներ կազմակերպելու նախաձեռնությունների հետ, որտեղ ներկայացվել և հիմնավորվել են Փաստարկման երևանյան դպրոցի ներկայացուցիչների կողմից մշակվող տեսական մոտեցումներն ու հայեցակարգերը:

Երրորդ՝ Փաստարկման երևանյան դպրոցի գիտական հրատարակումների թեմատիկ ուղղվածությունն ու բովանդակային առանձնահատկությունները, ենթազխում բազմակողմանի վերլուծության են ենթարկվում Փաստարկման երևանյան դպրոցի տեսամեթոդական հենք դարձած Դպրոցի ներկայացուցիչների հրապարակումները:

Երրորդ գլուխը՝ Փաստարկման սահմանումն ու առարկայական տիրույթի ճշգրտումը փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում, բաղկացած է երեք ենթազխից:

Առաջին ենթազխում՝ Փաստարկման տեսության նախապայմանների գաղափարի առաջադրումը Փաստարկման երևանյան դպրոցում, հիմնավորվում է այն խնդիրը, որ կանոնավոր փաստարկման համար անհրաժեշտ է, որ փաստարկող կողմերը ելնեն մի քանի դրույթներից, որոնք փոխընդ-

⁵⁴ Տեսական սեմինարների ղեկավար Գ.Բրուտյանը սահմանել է դրանք վարելու հետաքրքիր կարգ. յուրաքանչյուր թեմայի քննարկման համար ներածական զեկուցումներով հանդես են գալիս երկու զեկուցողներ, որոնք էլ պատասխանում են լսարանի հարցերին: Նրանցից մեկը դասախոս է, հաճախ՝ նշանավոր գիտնական, մյուսը՝ ուսանող: Ձեկուցողների հավասար իրավիճակը զգալիորեն խրախուսում է ուսանողին, ոգևորում և գոտեպնդում նրան, միևնույն ժամանակ բարձրացնում դասախոս-զեկուցողի պատասխանատվությունը լսարանի և իր մրցակից զեկուցողի առջև:

բռնման և ստույգ եզրակացությունների հնարավորություն կտան: Գ.Բրուտյանն առաջադրում է այդպիսի չորս նախապայման. սովյալ լեզվով փաստարկողների կողմից լեզվի քերականության կանոնների, նորմատիվային քերականության պահպանումը, տրամաբանության կանոններին անվերապահորեն հետևելը, ճշմարտությամբ ղեկավարվելը և փաստարկման ընթացքում անթույլատրելի հնարներից խուսափելը:

Երկրորդ ենթադիտում՝ Տրամաբանության դերը փաստարկման գործընթացում պարզաբանելու նպատակով դիտարկվել է Գ.Բրուտյանի *Փաստարկման տրամաբանությունը (Պերելմանի տեսակետը. կողմ և դեմ փաստարկմանը)* գեկուցումը, որով նա համոզեց է եկել 1993 թ. Բելգիայում և, որն ունի վիճաբանական բնույթ և առավել ցայտուն է դրսևորում հեղինակի կարծիքը փաստարկման գործընթացում տրամաբանական գործոնի դերի և նշանակության մասին: Ըստ Գ.Բրուտյանի, փաստարկման ընթացքում տրամաբանության դերի գնահատման հարցը Խ.Պերելմանի փաստարկման տեսության թե՛ ուժեղ և թե՛ թույլ կետն է, ինչն էլ առաջ է բերում որոշ փորձագետների քննադատությունը և այլոց՝ ոգևորությունը: Խ.Պերելմանի տրամաբանության և փաստարկման փոխհարաբերության տեսությունը հենվում է որոշակի նախադրյալների վրա: Նա չի ընդունում տրամաբանության և փաստարկման նույնացումը, և այդպիսի տեսակետը բնութագրում է որպես պատրանք: Այս նախադրյալը, Գ.Բրուտյանի պնդմամբ, ճշմարիտ է, անկախ բուն տրամաբանություն հասկացությանը տրվող իմաստից: Խ.Պերելմանի ուսմունքում տրամաբանությունը (մասնավորապես, ապացուցման տեսությունը) և փաստարկման տեսությունը երկու տարբեր մտային կառույցներ են: Ըստ հայ փիլիսոփայի, դրանք, իրոք, տարբեր կառույցներ են, սակայն միայն այն դեպքում, երբ դիտարկվում են տարբեր համատեքստերում: Իսկ փաստարկման ընդհանուր տեսություն կառուցելիս, վերջինիս պնդմամբ, հարկ է իրականացնել տրամաբանության, ապացուցման տրամաբանական տեսության որոշակի վերակառուցում փաստարկման համակարգի շրջանակներում: Խնդիր, որի լուծման մի շարք տարբերակներ են հնարավոր, և, որոնցից մի քանիսը առաջարկում է հենց ինքը՝ Խ.Պերելմանը: Դրանցից մեկը՝ «տրամաբանները պետք է համալրեն ապացուցման տեսությունը փաստարկման տեսությամբ», Գ.Բրուտյանի վկայակոչմամբ, առաջադրված է Խ.Պերելմանի 1963 թ. հրատարակված *Արդարության գաղափարը և փաստարկի պրոբլեմը* գրքում: Իր մեկ այլ՝ *Պատասխան Յենրի Վ.Ջոնստոնին Զ.*, աշխատությունում, որն հրատարակվել է 1965 թ. *Փիլիսոփայություն, հոստորություն, փաստարկում (Philosophy, Rhetoric and Argumentation)* ժողովածու-ում փաստարկման բելգիացի տեսաբանը գալիս է մեկ այլ եզրակացության. «Սկզբունքորեն մեր թեզիսը չափազանցնում է հակադրությունն ապացուցման (ձևական) և փաստարկման միջև»: Գ.Բրուտյանն ուշադրություն է հրավիրում բերված երկու դատողությունների հակասականության վրա՝ նշելով, որ եթե առաջին պնդումը մատնանշում է տրամաբանական ապացուցման և փաստարկման ընդհանրությունը, ապա երկրորդն ընդգծում է հակասությունը դրանց միջև: Ստեղծված իրավիճակը հայ փիլիսոփան բացատրում է հետևյալ էական նշանակություն ունեցող նրբության անտեսմամբ. Խ.Պերելմանի առաջին դրույթում խոսվում է ապացուցման տեսության մասին ընդհանրապես, իսկ երկրորդում՝ զուտ ձևական ապացուցման մասին: Գ.Բրուտյանի համոզմամբ, պրոֆ. Խ.Պերելմանը հակադրում է ոչ միայն ձևական ապացուցումը և փաստարկումը, այլ նաև՝ տրամաբանությունը և փաստարկումը՝ դրանով իսկ ընդար-

ծակելով տրամաբանական ապացուցման պատկերացումը և փոխակերպելով այն տրամաբանության ընդհանրապես, բայց ոչ միշտ՝ ընդհանուր տրամաբանության (կանտյան ըմբռնմամբ): Գ.Բրուսյանի մատնանշմամբ, փաստարկման ընթացքում տրամաբանության դերի քննադատությունը Խ.Պերելմանն իրականացնում է տարբեր՝ հոգեբանական, իրավական, դիալեկտիկական փաստարկների և այլ տեսանկյուններից:

Քննելով Խ.Պերելմանի «Արդյոք ուժեղ փաստարկն արդյունավետ փաստարկն է, որն ավելացնում է ունկնդրի նվիրվածությունը, թե՞ այն հիմնավորված, ճշմարիտ փաստարկ է, որը պետք է, որ բարելավի այն», «Արդյոք փաստարկի ուժը պատկերավոր որակ է, թե՞ նորմատիվային»: Արդյոք այդ ուսմունքը բաժանվում է անհատական և սոցիալական հոգեբանությունների, թե՞ ավելի շուտ՝ տրամաբանություն-հոգեբանության» հարցադրումները, հայ փիլիսոփան գալիս է այն եզրահամգման, որ Պերելմանն ընտրում է բերված բաժանումների առաջին անդամները և իր *Նոր հռետորության* մեջ եզրակացնում է, որ փաստարկումը պետք է հենվի հոգեբանության և ոչ թե տրամաբանության վրա: Այս դրույթը նշված գրքի կարևորագույն դրույթներից է, որի *Ներածությունում* էլ հենց հայտարարվում է, թե փաստարկման տեսությունը կարող է քննվել որպես հոգեբանության ճյուղ:

Ակադ. Գ.Բրուսյանի պարզաբանմամբ, փաստարկման և տրամաբանության փոխհարաբերության պերելմանյան հայեցակարգի իրական նշանակությունը կարող է համարժեք ձևով ընկալվել այն Բրյուսեյան դպրոցում փաստարկման տեսության ստեղծման ժամանակաշրջանում տրամաբանություն գիտության զարգացման համատեքստում դիտարկելիս: Այդ ժամանակ տրամաբանությունը դիտվում էր որպես սիմվոլիկ կամ մաթեմատիկական, նրա որոշ բաժիններ ձևայնացված էին: Շատ գիտությունների առաջադիմության միտումը պահաջում էր համակարգիչների գործածում, այսինքն՝ գիտական տեսության ձևայնացում: Սրանով իսկ ձևայնացված տրամաբանությունը դառնում է տրամաբանության իդեալ: Լինելով ոչ միայն փաստարկման նոր տեսության ստեղծողներից մեկը, այլ նաև՝ տրամաբան՝ պրոֆ. Խ.Պերելմանը հասկանում է, որ նման տրամաբանությունը չի կարող գործածվել փաստարկման մեջ, մարդկային կյանքի շատ բնագավառներում. «Մաթեմատիկական տրամաբանության ազդեցությամբ տրամաբանությունը սահմանափակվել է ձևական տրամաբանությամբ, որպեսզի ուսումնասիրի մաթեմատիկական գիտություններում գործածվող ապացուցման մեթոդները» և տրամաբանությունը «զարգացել է կատարելապես ձևական գիտության, որը պայմանավորում է ճշմարիտ դեդուկցիայի պայմանները. այստեղից հետևում է, որ ապացուցումների ճնշող մեծամասնությունը գործածվում է իրավունքի, բարոյագիտության, փիլիսոփայության բնագավառներում, քաղաքական երկխոսություններում, իսկ առօրյա կյանքն ուղղակի իմաստով չի կարող համապատասխանել տրամաբանությանը»⁵⁵:

Փաստարկման և տրամաբանության փոխհարաբերության հարցին անդրադարձել է նաև պրոֆ. Ի.Ջալալսկին իր *Տրամաբանության դերը փաստարկման պրոցեսում* գրքուկում (Երևան, 1998 թ.): Ըստ նրա, փաստարկման ընթացքում տրամաբանության դերի գնահատման հարցում բազմաբնույթ,

⁵⁵ Perelman, Ch. *Reply to Henry W. Johnstone*. In: Natanson, M. and H.W. Johnstone, Jr. (eds.). *Philosophy, Rhetoric and Argumentation*. Pennsylvania: *The Pennsylvania State University Press*, pp. 135-137.

այդ թվում և ծայրահեղ հակասական կարծիքների (մի կողմից՝ մասնավորապես, Խ.Պերելման, Օ.Տիտեկա, մյուս կողմից՝ մասնավորապես՝ Գ.Բրուտյան) առկայությունը, որոնց հեղինակները փաստարկման խոշոր տեսաբաններ են, պահանջում է առավել աչալուրջ վերաբերմունք առաջադրված հարցի և դրանում տեղ գտած հակասական մոտեցումների արժեքավորման նկատմամբ: Ի.Ջասլավսկին դիտարկում է հարաբերակցվող տրամաբանություն և փաստարկում հասկացությունները, ճշգրտում դրանց բովանդակությունը և եզրակացնում է. «...փաստարկման համոզիչ լինելը զգալի չափով որոշվում է նրա տրամաբանական կառուցվածքով և տրամաբանական առանձնահատկություններով... փաստարկման համոզիչ լինելը ուղիղ կախվածության մեջ է գտնվում նրա տրամաբանական բնութագրերից: Ուստի, տրամաբանական քննարկումների դերը առավելապես որոշիչ է ինչպես փաստարկման ստեղծման, այնպես էլ նրա ըմբռնման գործում»⁵⁶:

Երրորդ ենթազխում՝ ճշմարտությունը փաստարկման գործընթացում, ներկայացվում է ճշմարտության Գ.Բրուտյանի ստեղծած հայեցակարգը, քննվում են ճշմարտությանն առընչվող խնդիրները, որոնք խորապես ուսումնասիրել են Երևանյան դպրոցի մի շարք ներկայացուցիչներ: Վ.Ավագյանը մշակել է փաստարկման իմացաբանական գործառնությունների ուրույն հայեցակարգ: Ի՞նչ դեր է նշանակություն ունեն փաստարկողական գործընթացները ճշմարտության կայացման մեջ, հնարավո՞ր է, արդյոք, չփաստարկված ճշմարտություն, արդյո՞ք ճշմարտությունը որպես փաստարկման նախապայման և որպես փաստարկման արդյունք նույնն է: Այս և նմանատիպ այլ հարցերի պատասխանները Վ.Ավագյանը մշակում է՝ համադրելով Ա.Սանասյանի գիտության մեթոդաբանության բնագավառում իրականացրած հետազոտությունների արդյունքներն ու Փաստարկման Երևանյան դպրոցում մշակված տեսությունները: Ըստ Վ.Ավագյանի, տեսության կառուցվածքում սուբյեկտիվ ծագում ունեցող բաղադրիչների հայտնաբերման, գիտելիքի օբյեկտիվության և ճշմարտության ապահովման գործում հաղորդակցման, գիտելիքի միջսուբյեկտային փորձարկման, նույն հարցի շուրջ տարբեր կարծիքների համադրման և այս կարգի այլ գործընթացները կարևոր նշանակություն ունեն: Օբյեկտիվության և ճշմարտության հիմնախնդիրների այդ տեսանկյունների ուսումնասիրության միջոցների շարքում ուրույն տեղ ունի փաստարկման տեսությունը: Վ.Ավագյանը փաստարկման տեսության մեջ ճշմարտության հիմնախնդրի քննարկման երկու հիմնական տեսանկյուններ է մատնանշում. 1) փաստարկման նախադրյալների (այն դատողությունների, որոնց վրա հենվում է փաստարկումը) ճշմարտության հարցը, այլ խոսքով, ճշմարտության՝ որպես փաստարկման նախապայմանի հարցը: 2) Փաստարկման դերը ճշմարտության հայտնաբերման, գիտելիքի կառուցվածքում առկա սուբյեկտիվ վերացման և գիտելիքի օբյեկտիվության ապահովման, վերացական գիտելիքի կոնկրետացման, գիտելիքի հունանիզացման գործընթացներում: Վ.Ավագյանը ճշմարտության մեկնաբանությունները դիտարկում է օնտոլոգիզմի և գնոսեոլոգիզմի հակադրության և դասական և ոչ դասական մեկնաբանությունների տարբերակման չափանիշների մշակման հիմնախնդիրների տեսանկյունից: Յեզելի փիլիսոփայության մեջ վերառված գնոսեոլոգիզմն ու օնտոլոգիզմը, օբյեկտիվի ու սուբյեկտիվի հակադրությունը, գոյաբանությունն ու իմացաբանությունը որպես ճշմարտության հիմնախնդրի զարգացման եռաստիճան

⁵⁶ Ի.Ջասլավսկի, *Տրամաբանության դերը փաստարկման պրոցեսում*. Երևան, 1998 թ., էջ 8:

զարգացում, Վ.Ավագյանն անվանում է «Ճշմարտության հիմնախնդրի դասական ցիկլ»:

Ըստ պրոֆ. Ս.Յովհաննիսյանի, ավարտուն գիտական տեսությունը տրամաբանորեն ապացուցված գիտելիքների համակարգ է, որտեղ առաջադրված դրույթները ճշմարիտ հիմքերից բխեցված եզրակացություններ են և ապացուցված են գիտական ապացուցման որոշակի տեսական կամ մեթոդական միջոցների օգնությամբ:

Ատենախոսության չորրորդ գլխում՝ Փաստարկման երևանյան դպրոցի գործունեության հիմնական տեսամեթոդաբանական արդյունքները, վերլուծվել են Դպրոցի ներկայացուցիչների կողմից փաստարկման և հիմնավորման, հիմնավորման և համոզման, հասարակական կյանքի և գիտության տարբեր բնագավառներում հիմնավորման առանձնահատկությունների և տեսակիրառական հարցերի ուսումնասիրությունները:

Առաջին Հիմնավորման խնդրի մշակումը Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում, ենթազվխում ներկայացված է հեղինակի կողմից Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում հիմնավորման հիմնախնդրի մշակման համալիր վերլուծությունը: Այսպես, հիմնավորման խնդրի Դպրոցի շրջանակներում անդրադարձել են Գ.Բրուսյանը, Ս.Յովհաննիսյանը, Ռ.Ջիջյանը, Ա.Աթանեսյանը, Ա.Ամիրխանյանը, Ա.Բրուսյանը, Մ.Վուլչենկոն, Վ.Բախչինյանը: Հիմնավորման հիմնախնդիրը Դպրոցի շրջանակներում մշակվում է միջառարկայական մոտեցմամբ և տեսակիրառական մակարդակներում, որոնցով պայմանավորված են հիմնավորման գործընթացի առանձնահատկությունները: Մասնավորապես, առանձնացվել է գիտական փաստարկման տեսությունը որպես գիտության շրջանակներում փաստարկման տեսություն, որում կարևորվում է գիտական դրույթների, վարկածների, տեսությունների ճշմարտության հիմնավորումը:

Հիմնավորման հիմնախնդրի ուսումնասիրությունը Դպրոցի շրջանակներում իրականացվում է բնագիտության և հասարակագիտության շրջանակներում, որտեղ հիմնավորմանը ներկայացվում են առանձնահատուկ պահանջներ և, համապատասխանաբար, որի ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել հիմնավորման առանձնահատուկ տեսակիրառական կողմերը (Երկրորդ ենթազվխի՝ **Հիմնավորման տեսակներն ըստ տարբեր առարկայական տիրույթների**): Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հիմնավորմանը փիլիսոփայության բնագավառում, հիմնավորման կիրառմանը տարբեր փիլիսոփայական հայեցակարգերում, ինչպես նաև հիմնավորման տեսահայեցակարգային գաղափարների առանձնացմանն ու վերլուծությանը՝ փիլիսոփայական մտքի տարբեր ներկայացուցիչների ըմբռնումների տեսանկյունից: Բացի այդ, հիմնավորման ուսումնասիրությունն իրականացվում է քաղաքական դիսկուրսի հենքի վրա, որտեղ վերջինս ունի ընդգծված արժեքաբանական իմաստ և կիրառական նշանակություն: Դպրոցի շրջանակներում մշակվել է նաև հիմնավորման տրամաբանական կառուցվածքը:

Երրորդ Փաստարկման վերաբերյալ արժեքային մոտեցման հիմնախնդրի մշակումը Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում, ենթազվխում ներկայացված են Դպրոցի ներկայացուցիչների, մասնավորապես՝ Դ.Շաքարյանի և Ա.Աթանեսյանի տեսակետները փաստարկման և հիմնավորման արժեքային կողմի վերաբերյալ, ում կարծիքով արժեքային կողմն առանձնացնում է հիմնավորումը փաստարկման այլ տարատեսակներից՝ բնութագրելով տար-

բեր փաստարկներից արժեքային կողմնորոշմամբ հիմնականի ընտրությունն ու ընդունվող որոշման հիմնավորումը:

Չորրորդ Փաստարկումը և լեզուն, ենթագլխում վերլուծվել են փաստարկման լեզվի մասին Դպրոցի ներկայացուցիչների մշակումները, որոնք ներառում են փաստարկման լեզվի տրամաբանական կառուցվածքի, ոճերի, քաղաքական փաստարկման լեզվի կիրառական կողմերի ուսումնասիրությունը:

Հինգերորդ Փաստարկումը և հռետորությունը. լսարանի դերը փաստարկման ընթացքում, ենթագլխում քննվում է փաստարկման և հռետորության տարբերությունների և առանձնահատկությունների շուրջ Փաստարկման երևանյան դպրոցի (Գ. Բրուտյան) և այլ տեսաբանների (մասնավորապես, Խ.Պերելմանի) գիտական վիճաբանությունը, որի ընթացքում մշակվել են փաստարկման և հռետորության տրամաբանական և արժեքաբանական կողմերը, իրականացվել են ուսումնասիրություններ փաստարկման լսարանի առանձնահատկությունների վերաբերյալ, որոնք ունեն միջառարկայական բնույթ և կիրառական նշանակություն տարբեր բնագավառներում՝ քաղաքական փաստարկման, լրագրության մեջ և այլուր:

Վեցերորդ Փաստարկում և մետափաստարկում, ենթագլխում ներկայացված են փաստարկման տեսության զարգացման նոր ակարդակի՝ մետափաստարկման վերաբերյալ Փաստարկման երևանյան դպրոցում իրականացվող արդի ուսումնասիրությունները և հարցադրումները:

Եզրակացությունում ամփոփվում են Փաստարկման երևանյան դպրոցի մեթոդաբանական և իմացաբանական վերլուծության արդյունքները՝ ըստ ստենախոսության չորս գլուխների:

Գլուխ 1.

- Փաստարկման հարցերի մեկնությունը ցույց է տալիս, որ դրանք իրենց ավանդույթներն ունեն հայ փիլիսոփայության պատմության մեջ և, որ Եզնիկ Կողբացին, Դավիթ Անհաղթն ու Գրի-որ Տաթևացին հայ իրականության մեջ խնդրո առարկա դարձած հարցերի տեսանկյունից ունեցել են իրենց նախորդներն ու հաջորդները, ուստի փաստարկման հայ ուսմունքների պատմության ուսումնասիրությունը չի սպառվում ու չի սահմանափակվում դիտարկված ստեղծա-որոժությունների քննությամբ և հայ մյուս խոշոր փիլիսոփաների տեսական ժառանգության մեկնությունը փաստարկման պրոբլեմների տեսանկյունից կարող է այլ հետազոտությունների նյութ դառնալ:
- Դիտարկված հայ փիլիսոփաների երկերում փաստարկման հասկացությունների բազմաբնույթ դաշտերը ստեղծելիս քննվել է դրանք ներկայացնող հասկացությունների յորժառնությունը՝ վերհանվելով փաստարկման տեսության պահանջների տեսանկյունից:
- Փաստարկման հասկացությային կազմի վերակառուցումը դիտարկված հեղինակների երկասիրություններում հնարավորություն է տվել այն համադրել ժամանակակից տեսությունների հետ և համեմատական վերլուծությամբ մշմարել վերջիններիս իտապատմական ակունքները:
- Հետազոտությունը և համեմատական վերլուծությունը ցույց են տալիս տրամաբանական հասկացությունների դաշտի ընդ-ծված առկայությունը դիտարկված ստեղծա-որժություններում: Ակնհայտ է, որ ըստ հայ փիլիսոփաների, փաստարկման ընթացքում վճռորոշը տրամաբանությունն է, տրամաբանական տարրերը, տրամաբանական հնարների ու սկզբունքների կիրառման եղանակը:

- Փաստարկման իմացաբանական հասկացությունների մեկնությունն ամենից առաջ հանգում է հայ փիլիսոփաների երկերում ճշմարտության արժեքավորմանն ու գնահատմանը: Ճշմարտությունը փաստարկման ընթացքում հակառակորդին հերքելու ամենահզոր միջոցն է. ճշմարտությունը մեզ նիզակակից դարձնելով խորտակեցինք անհեթեթ պնդումներն այն մարդկանց, ովքեր փորձեցին հերքել փիլիսոփայության գոյությունը (տես Անյաղթ, էջ 37):
- Նկատի ունենալով այն հանգամանքը, որ փաստարկման ժամանակակից տեսություններում ավելի լայն չափանիշներով և ուժգնությամբ հետազոտված է փաստարկման հասկացությաին կազմը, քան մեթոդներն ու հնարները, ատենախոսությունում փորձ է արվել առավելագույնս ներկայացնել հայ փիլիսոփաների մտորումները փաստարկման մեթոդների ու հնարների մասին, ինչը կարող է փաստարկման լեզվի շարահյուսության կաղապարի վերակառուցման հիմք ծառայել: Այդ նպատակով հայ փիլիսոփաների գործերում այս կամ այն չափով դրսևորված փաստարկման հետ առնչվող հասկացությունները դիտվել են փաստարկման ընթացքում գործելիս, փաստարկելիս, եթե անգամ այդ հասկացությունները չեն առանձնացվել որպես ինքնուրույն իմաստաբանական դաշտ: Հետազոտությունում վեր են հանվել փաստարկման մասին եզմիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Տաթևացու ուսմունքում տեղ գտած տրամաբանական մեթոդներն ու հնարները, բարոյագիտական սկզբունքներն ու չափանիշները, որոնցով փաստարկողը, ըստ հայ մտածողների, պետք է ղեկավարվի երկխոսության ընթացքում, մտքի և գործունենության փոխհարաբերությունը, համոզման եղանակներն ու հռետորական միջոցները, հարցադրման ձևերը և հարակից այն ամենը, ինչ կարող է պատկերացում տալ փաստարկման լեզվի շարահյուսության մասին և բացահայտ կամ ոչ-բացահայտ ձևով տեղ է գտել հայ իմաստասերների երկասիրություններում:
- Փաստարկման արժեքային չափանիշներն ու կողմնորոշիչները քննելիս արժեքները դիտվել են յուրօրինակ կապող օղակ հոգեբանական և բարոյագիտական տարրերի ու գործոնների, ինչպես նաև դրանց փաստարկային գործառությանը պայմանավորված համապատասխան տեսանկյունների միջև, ստանձնելով փաստարկային գործընթացի հոգեբանական և բարոյական մոտիվների այսպես կոչված կարգավորիչի դեր: Հայ հեղինակները տարբեր առիթներով դիմում են արժեքային գնահատականների, բայց որպես օրենք, ոչ թե արժեքային ըմբռումը վերլուծելու տեսանկյունից, այլ գործնականորեն այս կամ այն խնդրի օգտին կամ դեմ փաստարկելիս: Նրանց արժեքային ըմբռումների համակարգում իր տեղն է գտել նաև կարևորությունը որպես նահատական, որպես արժեքային չափանիշ:
- Հայ փիլիսոփաները (մասնավորապես Դավիթ Անհաղթը) ոչ միայն արտահայտում են իրենց վերաբերմունքը համոզման նկատմամբ, այլև ցույց են տալիս, որ համոզման մեջ ճարտասանությունն ու տրամաբանությունը գործում են կողք կողքի, և, որ ճարտասանությունը համոզման համար անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Այսինքն ոչ մի ճարտասանություն չի կարող համոզել, ուստի և անիմաստ է, եթե այն չի հիմնվում տրամաբանության, տրամաբանական հնարների, տրամաբանական հետևողականության, մտքի տրամաբանական անհակասական

նության, նույնն է թե՛ ճշմարտության վրա: Փաստարկման հոգեբանական հնարների շարքում պետք է դասել նաև հաճելիության զգացման ապահովման պահանջը, որ առաջադրում է Դավիթը:

- Ինչպես փաստարկման ժամանակակից տեսությունները, այնպես էլ փաստարկման մասին դիտարկվող հայ փիլիսոփաների ուսմունքն ամբողջական համակարգ են դառնում, երբ հարցադրումն ու հարցումը, հարց-հակափաստարկները, հռետորական հարցերը իրենց իրական տեղն են գտնում այդ համակարգում: Ըստ հայ փիլիսոփաների, հարցման հիմքում ընկած են տրամաբանությունը, տրամաբանական հնարները, որոնք «հարց ու պատասխանի» գործընթացի կազմակերպման, ամեն մի քննարկման ու երկխոսության կարևորագույն գործոններն են: Թերևս հարցադրման և տրամաբանության կապով է բացատրվում այն հանգամանքը, որ հարցերի, դրանց կառուցվածքի, տիպերի ճշտության, կանոնավորության պայմանների հետազոտությունը փաստարկման տրամաբանության տեսության կարևորագույն խնդիրներից է, իսկ դրանց հետազոտությամբ զբաղվող ինտերոգատիվային կամ «հարց ու պատասխանի տրամաբանությունը»՝ նույն տեսության կարևորագույն բաժիններից մեկն է:

Գլուխ 2.

- Փաստարկման երևանյան դպրոցի ինստիտուցիոնալացումը սկզբնական փուլում (1970-ականներից սկսած) միջառարկայական գործընթաց էր, որը ներառում էր փիլիսոփայության շրջանակներում մշակվող մի շարք հումանիտար առարկաների զարգացման արդյունքում առաջադրված հարցադրումներն ու փաստարկման ոլորտում դրանց լուծման հնարավորությունները: Բացի այդ, սկզբնական փուլում հենված լինելով Երևանի պետական համալսարանի դիպլեկտիկական մատենիալիզմի և տրամաբանության ամբիոնի, ապա՝ Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետի գործունեության վրա, Փաստարկման երևանյան դպրոցում իրականացվող հետազոտական գործունեության կայացումն ու ինստիտուցիոնալացումը կապված է եղել մի շարք այլ բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների հետ Յայաստանում և արտերկրում, այդ թվում՝ ՌԴ-ում, Բելոռուսում, Ուկրաինայում, Վրաստանում և այլուր:
- Փաստարկման երևանյան դպրոցի կայացումն ու զարգացումն ապահովվել է Դպրոցի տեսահայեցակարգային դրույթները մշակող և ներկայացնող հետազոտողների գործունեության շնորհիվ, ովքեր նպաստել են Դպրոցի կայացմանը՝ ակտիվորեն հանդես գալով հրապարակային դասախոսություններով Յայաստանում և արտերկրում, մասնակցելով տեղական և միջազգային գիտաժողովների և սեմինարների, իրենց դրույթներն են պաշտպանել արտասահմանյան երկրներում գործող փաստարկման դպրոցների ներկայացուցիչների հետ ունեցած հայեցակարգային վիճաբանություններում:
- Փաստարկման երևանյան դպրոցի ներկայացուցիչներն հրատարակել են իրենց գիտահետազոտական աշխատությունները փաստարկման մասնագիտական ամսագրերում, ինչպես նաև առաջ են քաշել և հիմնավորել իրենց գիտական առաջարկները՝ հրատարակելով մեծագույններն էր և դասագրքեր փաստարկման, տրամաբանության, հռետորուբ-

յան, հիմնավորման, համոզման և միջառարկայական ուղղվածություն ունեցող հետազոտությունների վերաբերյալ: Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում մշակված տեսափայտակարգային դրույթների և տեսակիրառական գաղափարներին անդրադարձող աշխատությունները հրատարակվել են Հայաստանում, ՌԴ-ում, ԱՄՆ-ում, Ուկրաինայում, Բելոռուսում, Վրաստանում, Ղազախստանում, Բուլղարիայում, Ճապոնիայում, Նիդեռլանդներում, Ֆինլանդիայում, Գերմանիայում, Մոնղոլիայում, Մեծ Բրիտանիայում, Հունաստանում և այլուր: Արդյունքում Փաստարկման երևանյան դպրոցի կայացումն ու ինստիտուցիոնալացումը ստացել է հիմնավորված տեսակիրառական բնույթ և արտացոլվել բոլոր տեսակի գիտական հրատարակումներում:

- Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում մշակված և հրատարակված աշխատությունների թեմատիկ ուղղվածությունը վերաբերում է փաստարկման տեսությանը՝ փաստարկման և տրամաբանության, փաստարկման և ճշմարտության, փաստարկման և հիմնավորման, փաստարկման և մետափաստարկման հիմնախնդիրներին ինչպես նաև փաստարկման կիրառական կողմերին՝ փաստարկման և լեզվի, փաստարկման և հռետորության, հիմնավորման գործառույթային առանձնահատկությունների և տարբեր բնագավառներում փաստարկման առանձնահատկությունների բացահայտման և կիրառման հիմնախնդիրների մշակմանը:

Գլուխ 3.

- Փաստարկման երևանյան դպրոցի հայեցակարգային հենքերից է փաստարկման տեսության նախապայմանների գաղափարը, որի առաջադրումն առանձնացնում է երևանյան դպրոցը փաստարկման տեսության այլ դպրոցներից: Փաստարկման տեսության նախապայմանները հիմնրված են փաստարկման ընթացքում տրամաբանական կանոնների պահպանման անհրաժեշտության սկզբունքի վրա, որով նաև բնութագրվում են փաստարկման և տրամաբանության կապն ու փոխապայմանավորվածությունը: Փաստարկման տեսության նախապայմանները չորսն են. տվյալ լեզվով փաստարկողների կողմից լեզվի քերականության կանոնների՝ նորմատիվային քերականության պահպանումը, տրամաբանության կանոններին հետևելը, ճշմարտությամբ ղեկավարվելը և փաստարկման ընթացքում անթույլատրելի հնարներից խուսափելը:
- Փաստարկման երևանյան դպրոցին է պատկանում փաստարկման ընթացքում տրամաբանության դերի ուսումնասիրությունն ու փաստարկման տրամաբանության մշակումը, ինչը իրականացրել է Դպրոցի հիմնադիր Գեորգ Բրուտյանը: Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում, մասնավորապես, պաշտպանվում է փաստարկման ընթացքում տրամաբանության անհրաժեշտությունն ու տրամաբանական կանոններին հետևելու պահանջը, հիմնավորվում են փաստարկման ընթացքում ձևական և ոչ-ձևական տրամաբանությունների առանձնահատկությունները: Այս դրույթների հիմնավորումը Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում իրականացվում է՝ հակադիր կարծիքների և այլ տեսակետ ունեցող դպրոցների ներկայացուցիչների (Խ.Պերելման, Օլբրեխտս-Տիտեկա, և այլոք) հետ գիտական վիճաբանության շրջանակներում, ինչը տեղ է գտել փաստարկման վերաբերյալ հայաստանյան և արտասահմանյան հրատարակումներում: Բացի այդ, Փաստարկ-

ման երևանյան դպրոցի շրջանակներում առանձնացվել են փաստարկման մի շարք բաղադրատարրեր՝ ապացուցումը, հերքումը, պերճախոսությունը, համոզումը, հիմնավորումը, արժեքավորումը և այլն:

- Դպրոցի շրջանակներում մշակված տեսական գաղափարներից է փաստարկման ընթացքում ճշմարտության հիմնախնդիրը, որով Դպրոցը ևս առանձնահատուկ է և տարբերվում է, մասնավորապես, փաստարկման և հռետորության նույնացման ավանդույթը դավանող դպրոցներից, ըստ որոնց ճշմարտությունը փաստարկման ընթացքում կարող է երկրորդական բնույթ կրել և ստորադասվել փաստարկման նպատակադրությանը: Փաստարկման երևանյան դպրոցում փաստարկման ընթացքում ճշմարտության կարևորման և այդ հիմնախնդրի մշակման հարցում կարևոր ավանդ են ունեցել Գ.Բրուտյանը, Ս.Յովհաննիսյանը, Ա.Ամիրխանյանը, Վ.Ավագյանը, ովքեր ցույց են տվել փաստարկման ընթացքում ճշմարտության ապահովման տրամաբանական մեխանիզմները՝ կապված, մասնավորապես՝ փաստարկման ընթացքում ապացուցման տարրի հետ:

Գլուխ 4.

- Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում մշակված հիմնական տեսական հայեցակարգերից է հիմնավորման տեսությունը, որի համալիր մշակմամբ Դպրոցն առանձնանում է փաստարկման այլ դպրոցներից: Երևանյան դպրոցի շրջանակներում հիմնավորման տեսությունը մշակել են, մասնավորապես, Գ.Բրուտյանը, Ս.Յովհաննիսյանը, Ա.Աթանեսյանը, Ռ.Ջիջյանը, Ա.Ամիրխանյանը, Ա.Բրուտյանը, Մ.Վուլչենկոն, Վ. Բախշինյանը:
- Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում հիմնավորման տեսության մշակումը բխում է, մի կողմից, հասարակական կյանքի տարբեր բնագավառներում փաստարկման կիրառման փորձի ուսումնասիրությունից, մյուս կողմից, տարբեր գիտակարգերի շրջանակներում փաստարկման կիրառման առանձնահատկությունների միջառարկայական վերլուծությունից: Բացի այդ, հիմնավորման հայեցակարգի մշակումը իրականացվել է փիլիսոփայության տեսության, տրամաբանության, լեզվաբանության շրջանակներում, ինչը հնարավոր է դարձրել բացահայտել *հիմնավորում* հասկացության բովանդակությունն ու առանձնահատկությունները տարբեր լեզուներում (հայերեն, ռուսերեն, գերմաներեն, անգլերեն), *հիմնավորում* հասկացության կիրառման առանձնահատկությունները տարբեր փիլիսոփաների կողմից, առանձնացնել հիմնավորման գործընթացի տրամաբանական կառուցվածքն ու նպատակները՝ փաստարկման համատեքստում:
- Երևանյան դպրոցի շրջանակներում իրականացվել է հիմնավորման տարանջատումը փաստարկման այնպիսի բաղադրատարրերից, ինչպիսիք են՝ ապացուցումը և համոզումը, ինչը բխեցվել է հիմնավորման նպատակներից և արժեքաբանական բովանդակությունից: Մասնավորապես, հիմնավորման ընթացքում փոխվում են ճշմարտության վերաբերյալ առաջադրվող պահանջները, և հիմնավորման արդյունավետության հիմնական չափանիշները գնահատվում են արժեքաբանական տիրույթում՝ բերվող հիմքերի ընդունելիության, բավարար լինելու տեսանկյունից: Առանձնացվել և բնութագրվել են հիմնավորման հատկա-

նիշները, որոնք նկարագրում են հիմնավորման բավարար և ոչ-բավարար լինելու չափանիշները:

- Հիմնավորման հայեցակարգի մշակումը Փաստարկման երևանյան դպրոցում իրականացվել է միջառարկայական մոտեցման շրջանակներում, ինչն առանձնացնում է Դպրոցը փաստարկման հիմնախնդիրներով զբաղվող այլ գիտական կենտրոններից: Երևանյան դպրոցի շրջանակներում հիմնավորման առանձնահատկությունների ուսումնասիրությունն իրականացվել է՝ հենվելով գիտության տարբեր տիրույթներում (բնագիտություն, հասարակագիտություն), ինչպես նաև՝ գեղարվեստական ստեղծագործություններում և սոցիալական հարաբերություններում՝ առօրյա հաղորդակցության ընթացքում հիմնավորման փորձի, հիմնավորման կիրառության առանձնահատկությունների վերհանման և համալիր վերլուծության վրա:
- Առանձնացվել են փիլիսոփայական և տրամաբանական հիմնավորումների, բնագիտական և հասարակագիտական հիմնավորումների (գիտական հիմնավորում), գեղարվեստական ստեղծագործություններում հիմնավորման կառուցվածքային առանձնահատկությունները, արժեքաբանական խնդիրները:
- Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել քաղաքականության մեջ հիմնավորման առանձնահատկությունների վերհանմանն ու քաղաքականության բնագավառում հիմնավորման կանոնների մշակմանը (Ա.Բրուտյան, Ա.Աթանեսյան), որոնց կիրառմամբ կարող է պայմանավորված լինել քաղաքական որոշումների ընդունման, ինչպես նաև քաղաքական վերնախավ-հասարակություն երկխոսության արդյունավետությունը: Ավելին. քաղաքական որոշումների և դիրքորոշումների հիմնավորումը այն բնագավառն է, որի ուսումնասիրությամբ կարելի է չափել և բնութագրել տվյալ քաղաքական համակարգում առկա քաղաքական մշակույթի, քաղաքական հաղորդակցությունների, քաղաքական վարչակարգի առանձնահատկությունները:
- Հիմնավորման արժեքաբանական վերլուծության հետ է կապված փաստարկման ուսումնասիրություններում արժեքային մոտեցման մշակումը, ինչի ուղղությամբ Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում աշխատել են Հր.Շաքարյանը, Ա.Վարդումյանը, Ա.Աթանեսյանը, ըստ որոնց՝ փաստարկման որժընթացում արժեքային մոտեցումը դրսևորվում է առկա այլընտրանքներից լավագույն այլընտրանքի առանձնացման և ընտրության մեջ: Ընդ որում, արժեքային մոտեցումը կարող է իրականացվել տարբեր չափանիշներով: Գիտության բնագավառում փաստարկման արժեքային մոտեցումը կարող է հենված լինել հենց գիտական ճշմարտության չափանիշի ապահովման անհրաժեշտության վրա, քաղաքականության բնագավառում՝ նպատակայնության վրա և այլն:
- Փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում մշակված հիմնահարցերից է փաստարկման և լեզվի հարցը: Ուսումնասիրվել են ինչպես փաստարկման և լեզվի, այնպես էլ փաստարկման լեզվի հիմնախնդիրները, առանձնացվել են մի շարք հասկացություններ, որոնցից է *փաստարկային խոսքնթաց* հասկացությունը (Է.Աթայան), տարբերակվել են տեքստի մակարդակները (բուն լեզվական, արտացոլող-ճանաչողական

և նպատակային), որոնք կարող են փաստարկման եղանակային աղբյուրներ լինել (Գ.Բրուտյան, Յու.Կարաուլով), իրականացվել է փիլիսոփայական փաստարկման լեզվի էության բացահայտման փորձ (Ռ.Պավլիյոնիս):

- Վեր է հանվել կապը փաստարկման՝ որպես կշռադատության ձևի և իմպլիկատիվ (ներակայող) ասույթների՝ որպես առաջինի լեզվական, ընդ որում ամենատարածված արտահայտության, միջև կապը: Վերլուծության է ենթարկվել փաստարկման և ներակայող պատճառական և պայմանական ասույթների տեսակների միջև (Լ.Բրուտյան):
- Իրականացվել է փաստարկման լեզվի դրսևորման առանձնահատկությունների մեկնությունը սոցիալ-քաղաքական կյանքում (Յ.Յ.Յովհաննիսյան): Մասնավորապես՝ առանձնացվել են քաղաքական փաստարկման երեք առանձնահատկություններ. առաջին, քաղաքական փաստարկման ընթացքում կիրառվող այնպիսի փաստարկներ, որոնք բացահայտ կամ ոչ բացահայտ ձևով վերաբերում են վիճելի դրույթների սուբյեկտներին: Երկրորդ՝ քաղաքական փաստարկման ընթացքում իրենց բնույթով անձնային (անձին վերաբերող) փաստարկները կիրառվում են ոչ թե սոսկ անհատական-անձնային մակարդակում, այլ սոցիալ-անձնային մակարդակում, այն իմաստով, որ դրանք պայմանավորված են սոցիալական շահերով: Երրորդ՝ *քաղաքական փաստարկման լեզու* հասկացությունը դիտվում է որպես *փաստարկման լեզու* հասկացության տարատեսակ և վերջինիս նման դիտարկվում է երկու տեսանկյուններով: *Քաղաքական փաստարկման լեզու* ասելով նկատի են առնվում ամենօրյա խոսակցական լեզվի արտահայտման միջոցները, լեզվական հնարների ամբողջությունը, և այդ դեպքում քաղաքական փաստարկման լեզուն դրսևորվում է բավականին յուրօրինակ, քանի որ դրանում բացառիկ դեր են կատարում ճարտասանական արվեստը, հռետորությունը, բառի ուժը, հասկացությունների բազմիմաստությունը:
- Տարբերակվել են քաղաքական փաստարկման լեզվի իմաստաբանությունը (քաղաքական փաստարկման առանձնահատուկ հասկացությունների ամբողջությունը) և շարահյուսությունը: *Քաղաքական փաստարկման լեզվի իմաստաբանություն* հասկացությունը կարելի է ստանալ *քաղաքական ճառի լեզվի իմաստաբանություն* և *քաղաքական լեզվի իմաստաբանություն* հասկացությունների նկատմամբ մի դեպքում «զումարուն», մի այլ դեպքում՝ «բազմապատկուն» տրամաբանական գործողությունների կիրառման արդյունքում:
- Փաստարկման երևանյան դպրոցում մշակվել է նաև փաստարկման լեզվի ոճի հիմնախնդիրը: Մասնավորապես, ուսումնասիրվել է *փաստարկման լեզվի իմաստաբանություն* հասկացությունը և մեթոդաբանական շարահյուսությունը (Վ. Ավագյան):
- Փաստարկման և հռետորության հիմնախնդիրը Երևանյան դպրոցի շրջանակներում հիմնականում իրականացվել է Գ.Բրուտյանի և Խ.Պերելմանի կողմից փաստարկման և հռետորության առնչությունների բացահայտման և մեկնաբանման տարբերությունների հիման վրա: Եթե Խ.Պերելմանը նույնացնում է փաստարկումն ու հռետորությունը՝ փաստարկումն անվանելով «նոր հռետորություն», ապա ըստ Գ.Բրուտյանի, և ապա՝ նրա հետևորդների մոտեցման՝ եթե փաստարկումը տեղի է

ունենում այն առարկայական տիրույթում, որտեղ համոզելու խիստ անհրաժեշտություն չկա, ապա հռետորության կամ պերճախոսության կարիք չի կարող լինել: Իսկ եթե փաստարկումը վերաբերում է այնպիսի դեպքերի, երբ համոզման անհրաժեշտություն կա, ինչպես օրինակ, հասարակական-քաղաքական ոլորտում, ապա հռետորությունը, պերճախոսության արվեստը կարևորա-ույն մշանակություն են ստանում:

- Կեղծ հռետորությունը հենվում է կեղծ փաստարկների և պերճախոսության վրա, մինչդեռ փաստարկման տարբեր բաղադրատարրերի (մասնավորապես ապացուցման) դեպքում կեղծ փաստարկների կիրառումը անթույլատրելի է:
- Փաստարկման և հռետորության առանձնահատկությունների բացահայտման համատեքստում Դպրոցում մշակվել են փաստարկման տրամաբանական և արտատրամաբանական միջոցներ, ուսումնասիրվել են լսարանի տիպերն ու հռետորության ձևերը, սահմանվել են հռետորության գործառույթները:
- Փաստարկման երևանյան դպրոցում մշակվող տեսանթողաբանական խնդիրներից է փաստարկման և մետափաստարկման՝ մետատեսության մակարդակում փաստարկման հիմնախնդիրների ուսումնասիրությունը և փաստարկման տեսության քննությունը: Մետափաստարկման մոտեցմամբ փաստարկման տեսության հետագա մշակումը հեռանկարային ուղղություններից է:

Ատենախոսության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հետևյալ հրատարակություններում.

1. «Բրայտոնը, Սևանը և Տուրկուն փաստարկման կլոր սեղանի շուրջ»: Փոխտապարկական տարեգիրք (էջ 126-142): Երևան, 1989, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն:
2. Փաստարկման հասկացութային կազմը Դավիթ Անհաղթի երկասիրություններում: Երիտասարդ իմաստասերի ամբիոն: Պրակ 1 (էջ 3-22): Երևան, 1993, ՀՀ ԳԱ Գիտություն հրատարակչություն:
3. Փաստարկման մեթոդներն ու հնարները Դավիթ Անհաղթի երկասիրություններում: Երիտասարդ իմաստասերի ամբիոն: Պրակ 1 (էջ 23-40): Երևան, 1993, ՀՀ ԳԱ Գիտություն հրատարակչություն:
4. Համառոտ ակնարկ Փաստարկման երևանյան դպրոցի ձևավորման ու զարգացման մասին (64 էջ): Երևան, 1997, ՀՀ ԳԱ Գիտություն, Մխիթար Գոշ հրատարակչություն:
5. Փաստարկման հարցերը Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցում»: Հասարակական գիտություններ 21-րդ դարի շեմին: Միջբուհական ժողովածու: Ձեկուզումների թեզիսներ (էջ 47): Երևան, 2000, Լինգվա հրատարակչություն:
6. Հարց ու պատասխանի տրամաբանության դրսևորումները Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» աշխատասիրությունում: «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, № 2 (էջ 103-112): Երևան, 2001, Ասողիկ հրատարակչություն:
7. Փաստարկման շարահյուսական մեթոդներն ու հնարները Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցում»: «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, № 4 (էջ 149-154): Երևան, 2001, Ասողիկ հրատարակչություն:

8. Քաղաքականության մեջ կնոջ դերի թերազնահատման իմացաբանական հիմքերը. Պետություն և իրավունք: ՀՀ իրավաբանների միություն: Թիվ 2 (12) (էջ 64-67): Երևան, 2001:
9. Լեզվական արտահայտությունների իմաստի ճշգրտման հարցի շուրջը. Գիտական աշխատություններ. Հասարակական գիտություններ: Պրակ 2 (էջ 171-174): Երևան, 2003, Լինգվա հրատարակչություն:
10. Գրիգոր Տաթևացին և փաստարկման տեսության հարցերը. Գիտական աշխատություններ, Հասարակական գիտություններ, Պրակ 3 (էջ 47-88): Երևան, 2005, Լինգվա հրատարակչություն:
11. Փաստարկման հիմնահարցերը հայ փիլիսոփայական մտքի պատմության համատեքստում. Գիրք 1. Երեք ուրվագիծ՝ Եզնիկ Կողբացի, Ղավիթ Անհաղթ, Գրիգոր Տաթևացի (326 էջ): Երևան, 2005, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատարակչություն:
12. Հիմնավորման պրոբլեմը Փաստարկման երևանյան դպրոցում. Գիտական աշխատություններ, Հասարակական գիտություններ, Պրակ 5 (էջ 4-39): Երևան, 2007, Լինգվա հրատարակչություն:
13. «Փաստարկում և մետափաստարկում». – Փիլիսոփայություն և Սեւտափիլիսոփայություն (էջ 186-190): Երևան, 2007, Փիլիսոփայության միջազգային ակադեմիա հրատարակչություն:
14. Փաստարկման հիմնահարցերը հայ փիլիսոփայական մտքի պատմության համատեքստում. Գիրք 2. Փաստարկման երևանյան դպրոց (452 էջ): Երևան, 2009, Փիլիսոփայության միջազգային ակադեմիա հրատարակչություն:
15. “The Arguments of Force and The Force of Arguments: Violence and Progress in Armenian Enlightenment Thought”. In: Progress et Violence au XVIII^e Siuclé, edito par V.Cossy et D.Dawson (pp. 145-163). Paris, 2001, Honore’ Champion Editeur. Diffusion hors France: Editions Slatkine.
16. “International Activity of the Yerevan school for Argumentation”. In: Изменяющееся общество. Теория и практика. No 1,2 (сс. 34-37). 2001, ЕГУ.
17. “Language of Argumentation.” In: Journal of Applied Electromagnetism (JAE). Institute of Communication and Computer Systems (pp. 113-123). Athens-Greece, 2006.
18. “The International Academy for Philosophy”. In: Dialogue and Universalism: Metaphilosophy as the Wisdom of Science, Art, and Life. Vol. XVI. № 5-6 (pp. 161-74). 2006, Published montly by Polish SEC (SOCIÉTÉ EUROPÉ-ENNE de CULTURE) and Academic Publishing House DIALOG.
19. “Argumentation and Metaargumentation” - In: Philosophy and Metaphilosophy pp. 64-67). Yerevan, 2007, International Academy for Philosophy.
20. “Yerevan School of Argumentation on the Threshold of the 21th Century: The Problem of Foundation”. In: Perspectives of Philosophy in the 21st Century. Proceedings of the Second Annual Conference (Athens November 24-26, 2006), 2007 (pp. 11-25).
21. “Argumentation and Metaargumentation” - In: News and Views, № 18 April (pp. 22-25). 2008, Yerevan (Armenia) - Athens (Greece) - Berkeley USA).
22. “Metaargumentation from the Perspective of Metaphilosophy” - In: News and Views, № 18 April (p. 47). 2012, Yerevan (Armenia) - Athens (Greece) - Berkeley USA).

23. “Специфика и основные исследовательские направления Ереванской школы аргументации”. Вопросы правоведения. Межвузовский сборник научных трудов. № 2 (с.с. 59-71). Ереван, 2001. Изд-во ЕГУ.
24. “Основные аспекты деятельности Ереванской школы аргументации”. Вопросы правоведения. Межвузовский сборник научных трудов. № 3 (с.с. 33-39). Ереван, 2001. Изд-во ЕГУ.
25. Ереванская школа аргументации (с. 67). София, 2001.
26. “Ереванската школа по аргументация” (на болгарском языке). В кн.: Саркис Саркисян. Армения. Духовен и научен живот през вековете (с.с. 374-386). София, 2001.

HASMİK OVHANNESI HOVHANNISYAN H.

YEREVAN SCHOOL OF ARGUMENTATION (Methodological and Gnoseological Analysis)

Thesis for the scientific degree of Doctor of Science (Doctor of Habilitation) in Philosophy by specialty 09.00.01. “Theoretical Philosophy, Logic, Philosophy of Science”.

The defense of the thesis will be held on December 27, 2012 at 14:00, at the session 064 professional commission granting scientific degrees at the Armenian State Pedagogical University after KhachaturAbovyan. Address: Armenia, Yerevan 0010, str. Tigran Mets 17.

S U M M A R Y

The doctoral dissertation consists of introduction, 4 chapters with their subchapters, conclusion and bibliography. In the dissertation the following conclusions are drawn as a result of methodological and gnoseological studies of Yerevan School of Argumentation:

Chapter 1:

- Analysis of argumentation issues demonstrates that they have been studied traditionally and have roots in the medieval Armenian philosophical thought, including famous Armenian philosophers Eznik Kohbatsi, Davit Anhaght (Invincible), and Grigor Tatevatsi. Their approaches to determine the range of notions included in the argumentative processes, the logical construction of argumentation by those philosophers, as well as comparative analysis of their thoughts with the modern views on argumentation werestudied in the dissertation.
- Besides, the problems of truth in argumentation, the axiological approach to arguments and persuasion, as well as problems of rhetoric in argumentation and debate developed by the medieval Armenian philosophers were studied in the dissertation.

Chapter 2:

- The institutionalization of Yerevan School of Argumentation since 1970th was studied in the dissertation, including establishment of its branches in Armenia

and in other countries, its integrative activities in the Soviet Union and abroad, the activities of its representatives including their public lectures and participation in local and international conferences, their publications in frames of development of argumentation theory, and their constant discourse with counterparts about concrete issues of argumentation theory and practice.

- The most influential publications of the representatives of Yerevan School of Argumentation were analyzed in the dissertation. The monographs and articles representing major trends in developing argumentative theory in frames of Yerevan School of Argumentation have been published in different languages in Armenia, Russia, Ukraine, Belorussia, Kazakhstan, Moldova, Georgia, Finland, Bulgaria, the Netherlands, the USA, Japan, and elsewhere. In those works the theory of argumentation was represented and developed, including issues of logic and argumentation, argumentation and foundation, argumentation and language, argumentation and persuasion, argumentation and rhetoric, etc.

Chapter 3:

- One of the major aspects of argumentation theory developed in frames of Yerevan School of Argumentation is a problem of preconditions of argumentation, including normative frames, logical constructions and requirements, as well as linguistic frames.
- The very important issue developed is question about logic in argumentation, which is one of the major approaches developed by Yerevan School of Argumentation representatives, started from academician Prof. Dr. Georg Brutian.
- The issue of truth in argumentation is also very specific for Yerevan School of Argumentation, demonstrating the role and importance of truth as precondition as well as background to construct argumentative discourse, is different from rhetoric where truth used to be undermined by various philosophical considerations, includes representatives of different argumentative schools in the world with whom representatives of Yerevan School of Argumentation have been in the constant and fruitful discourse on the issue.

Chapter 4:

- One of the subjects developed in frames of Yerevan School of Argumentation is foundation problem, which is based on the research activities of a number of Armenian and international scholars. The problem of foundation has been developed here in relationship with such issues as persuasion and problem of truth. By means of interdisciplinary approach the problem of foundation has been studied on the both theoretical and practical levels, including foundation processes in various fields of social life, as well as in different sciences – in mathematics and natural sciences, in philosophy and humanities.
- The specific attention has been paid on studies of foundation aspects in political science and politics, which are the very interesting fields of theoretical and practical applications of foundation. Political argumentation and debate are among the basic subjects of scholars working in frames of Yerevan School of Argumentation.
- One of the basic aspects of studying argumentation and justification problems in frames of Yerevan School of Argumentation is axiological approach.
- Among the issues studied by the representatives of the School is language of argumentation, including semantics and syntaxes, as well as language style of

argumentation. Specifics of language of political argumentation have also been in the center of analysis.

- Among the issues included into consideration under Yerevan School of Argumentation is meta-argumentation as analytical approach and level of analysis, which is very perspective for the development of argumentative studies in Armenia and the world.

ОГАНЕСЯН АСМИК ОГАНЕСОВНА

ЕРЕВАНСКАЯ ШКОЛА АРГУМЕНТАЦИИ (методологический и гносеологический анализ)

Диссертация на соискание ученой степени доктора философских наук по специальности 09.00.01. - "Теоретическая философия, логика, философия науки".

Защита диссертации состоится 27-го декабря 2012 г. в 14⁰⁰ на заседании специализированного совета 064 ВАК по присуждению ученой степени при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца 17.

Р Е З Ю М Е

Представленная к защите докторская диссертация состоит из введения, четырех глав с подглавами, заключения и списка литературы. В диссертации представлены следующие выводы, полученные в результате методологического и гносеологического анализа становления и деятельности Ереванской школы аргументации:

Глава 1:

- В работе предпринят анализ историко-философских основ деятельности Ереванской школы аргументации, включая анализ элементов теории аргументации в трудах средневековых армянских философов Езника Кохбаца, Давида Анахта (Непобедимого) и Григора Татеваци, которые в своих трудах обращались к анализу различных аспектов аргументации – разработке понятийного аппарата, проблеме убеждения и риторических приемов в аргументации, проблеме истины в аргументации, и т.д.
- Кроме того, интересна разработка в трудах средневековых армянских философов ценностного (аксиологического) подхода к аргументации и дебатам.

Глава 2:

- В диссертации проведен анализ процесса институционализации Ереванской школы аргументации, начиная с 1970-х годов, и вплоть до настоящего времени. Становление Ереванской школы аргументации имело место в результате активной деятельности ее представителей – их публичных лекций и выступлений по проблемам аргументации на национальных и международных конференциях и семинарах, а также в процессе постоянного диалога между представителями различных школ исследования аргументации.

- В диссертации проведен анализ научной деятельности представителей Школы – их научных трудов, опубликованных на различных языках в Армении, РФ, Украине, Белорусии, Казахстане, Молдове, Грузии, Финляндии, Нидерландах, Болгарии, США, Японии и ряде других стран. На современном этапе деятельность представителей Ереванской школы аргументации включает разработку и развитие проблем логики и аргументации, аргументации и обоснования, аргументации и убеждения, проблемы истины в аргументации, аргументации и риторики, языка аргументации, и т.д.

Глава 3:

- Одним из теоретических направлений деятельности Ереванской школы аргументации является разработка проблемы предпосылок аргументации, включая нормативную систему, логическую конструкцию аргументации, а также языковые возможности и приемы.
- Одним из важнейших направлений является разработка и развитие проблемы логики аргументации, начатое основоположником Школы академиком Г. Брутяном.
- В системе деятельности Ереванской школы аргументации разрабатываются проблемы истины в аргументации, в качестве необходимой предпосылки и особенности аргументативного процесса. Вокруг данного вопроса и обоснования ценности истины в аргументации ведется активный спор между представителями Школы и их оппонентами из других школ аргументации, в частности, представителями теории аргументации как “новой риторики” (Перельман, и др.). Данный дискурс способствует развитию теории аргументации.

Глава 4:

- Одним из основных вопросов, разработанных в Ереванской школе аргументации, является проблема обоснования, анализ которой основывается на междисциплинарном подходе, на исследованиях процессов обоснования как на теоретическом и прикладном уровнях, так и в системе деятельности естественных и гуманитарных наук, в которых процесс обоснования имеет свою специфику. Кроме того, анализ обоснования осуществляется на уровне общественного дискурса, с учетом специфики практического применения приемов обоснования в повседневной и профессиональной деятельности.
- Особое внимание в Ереванской школе аргументации уделяется изучению особенностей обоснования в политике, в системе политических норм и принципов, в качестве необходимого элемента политического дискурса и процесса принятия политических решений.
- Важнейшим аспектом рассмотрения проблем обоснования в аргументации является аксиологический подход к исследованию не только проблемы обоснования, но и политической аргументации в целом.
- Для Ереванской школы аргументации характерно изучение языка аргументации, включая семантику, синтаксис и прагматику языка аргументации, а также стилей аргументации.
- На современном этапе развития теории аргументации перспективным направлением в рамках деятельности Ереванской школы аргументации является разработка теории метааргументации, представленная в диссертации.

**Ծավալը՝ 43 էջ, տպաքանակը՝ 100 օրինակ
Տպագրված է «Լուսաբաց հրատարակչատան» տպարանում**